

ՍՊԻՏԱԿ ՏԱՆ ՃՆՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՏԱԿ ՇԱՐՔ ՍԸ ԳՈՆԿՐԵՍԱԿԱՆՆԵՐ ՓՈԽԱԾ ԵՆ ԻՐԵՆՑ ԴԻՐՔԸ

Չորեքշաբթի, Հոկտեմբեր 17-ին Միացեալ Նահանգներու նախագահ ձորճ Պուշ, Սպիտակ Տան մէջ տեղի ունեցած մամուլի ասուլիսի մը ընթացքին, դարձեալ կոչ ըրաւ՝ Հայկական Յեղասպանութեան բանաձեւը դուրս հանել Ներկայացուցիչներու Տան օրակարգէն, չվնասելու համար Ամերիկայի ռազմավարական շահերուն։

Ամերիկեան մամուլը կը տեղեկացնէ որ, ձորճ Պուշ Բանաձեւի հարցով առաջին անգամ ըլլալով, անձնապէս հեռաձայնած է Ներկայացուցիչներու Տան խօսնակ Նէնսի Փլոսիին եւ պահանջած է Յեղասպանութեան հարցը չդնել Գոնկրէսի լիազուցար նիստի քուէարկութեան։

Ամերիկեան մամուլը նաեւ կը հաղորդէ որ, Սպիտակ Տան կողմէ Գոնկրէսի անդամներուն վրայ կատարուած անհատական ճնշումները սկսած են տալ իրենց արդիւնքը։ Հոկտեմբեր 15-ին եւ 16-ին Բանաձեւը հովանաւորող 12 գոնկրէսականներ քաշած են իրենց ստորագրութիւնները։

Այս գոնկրէսականները յայտարարած են որ, թէեւ Հայերու հետ պատահածը ցեղասպանութիւն էր, սակայն ներկայիս պատեհ ժամանակը չէ թուրքիան զայրացնելու։ Անոնք յայտնած են որ, իրենց հովանաւորութիւնը ետ վերցուցած են անդրադառնալէ ետք, որ Բանաձեւի վաւերացումը կրնայ ազդել թուրքիոյ մէջ գտնուող «Ինճիրլիք» ամերիկեան ռազմական զորքերուն վրայ եւ ատոր հետեւանքով կրնան վտանգուիլ իրաք մէջ գործող ամերիկեան զորքերը։

Այս իրադարձութիւններէն ետք, Հայկական Յեղասպանութիւնը հաստատող թիւ 106 բանաձեւը հովանաւորող գոնկրէսականներու թիւը նուազած է է 215-ի եւ այս թիւը մեծամասնութիւն չապահովէր։

Բանաձեւի վաւերացման համար մեծ ջանք թափող երկու գոնկրէսականներ՝ Ատէմ Շիֆ (Դեմոկրատ, Կլիստէլի-Փասատինա) եւ Պրէտ Շըրմըն (Դեմոկրատ, Շըրմըն Օքս) «Լոս Անճելըս Թայմզ» օրաթերթին յայտնած են որ, եթէ քուէարկութիւնը տեղի ունենայ այսօր արդիւնքը կրնայ շատ մօտ ըլլալ։

ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՊԱՆՈՒԹԵԱՆ ԲԱՆԱԶԵԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԵՆ ԵՏԸ ԹՈՒՐՔԻՈՅ ՄԷՋ ՍԿՍԱԾ ԵՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐՈՒ ԶԵՐԲԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐՆ ՈՒ ԱՐՏԱՔՍՈՒՄՆԵՐԸ

Միացեալ Նահանգներու Ներկայացուցիչներու Տան արտաքին յարաբերութեանց յանձնաժողովին կողմէ Հայկական Յեղասպանութիւնը հաստատող թիւ 106-րդ բանաձեւի ընդունումը կը շարունակէ գտնել միջազգային լայն արձագանք աշխարհի գրեթէ բոլոր ծագերուն։

Մինչ Գոնկրէսի խօսնակ Նէնսի Փլոսի կը վստահեցնէ, թէ Նոյեմբերին Բանաձեւը պիտի դրուի լիազուցար նիստի քուէարկութեան, թուրքիա ոչ միայն կը սպառնայ վերատեսութեան ենթարկել Ամերիկայի հետ իր ռազմական յարաբերութիւնները, այլ նաեւ սկսած է ճնշում բանեցնել Հայաստանի վրայ, առաջին հերթին ձերբակալելով իր սահմաններէն ներս գտնուող Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիները, զանոնք երկրէն

արտաքսելու նպատակով։

Ինչ կը վերաբերի թուրք-ամերիկեան յարաբերութիւններուն թուրքիոյ վարչապետ Ռեջէփ Էրդողան յայտարարած է, որ Հայոց Յեղասպանութիւնը ճանչցող բանաձեւի հաստատումէն յետոյ ԱՄՆ-ի եւ թուրքիոյ յարաբերութիւնները վտանգուած են։

Ըստ «Ռոյթըրզ» մամուլի գործակալութեան էրդողան ելոյթի մը ընթացքին յիշեցուցած է թրքական մէկ խօսքը՝ «Այնտեղ, որտեղ պարանը բարակցած է, այն կրնայ կտրուել»։ Վարչապետի այս բառերը անոր կողմնակիցները ընդունած են բուն ծափահարութիւններով։

Էրդողան նաեւ քննադատած է ամերիկացի դեմոկրատներուն։ «Դեմոկրատները կը վտանգեն Միացեալ Նահանգներու ապագան եւ հակամերիկեան զգացումներ կը

հրահրեն», - ըսած է ան։

Թուրքիոյ վարչապետը կոչ ըրած է ԱՄՆ-ի վարչակազմին, աւելի մեծ ջանքեր գործադրել բանաձեւի վերջնական ընդունումը կանխելու համար։

Միւս կողմէ, թրքական մամուլը կը տեղեկացնէ, որ իշխանութիւնները որոշած են սկսիլ հայերու զանգուածային արտաքսումը՝ 70 հազար անօրինական աշխատող հայաստանցիներուն վերադարձնելով Հայաստան։

Թուրք մեկնաբաններու կարծիքով Հայաստանի բնակչութեան 10%-ի եկամուտի հիմնական աղբիւրը թուրքիոյ մէջ աշխատանքն է, որու կորուստը Ամերիկահայութեան մեղքը պիտի նկատուի։

Թուրքիայէն հայերու ձերբա-

Շաբ.ը էջ 4

«ՀՈԿՏԵՄԲԵՐ 27-Ի» ՏԱՐԵԼԻՑԻՆ ԱՌԹԻ ՏԵՂԻ ՊԻՏԻ ՈՒՆԵՆԱՅ ՀԱՆՐԱՅԱԲ ԼԵՒՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՄԲ

«Հոկտեմբեր 27-ի» ոճրագործութեան տարելիցին նուիրուած հանրահաւաք նախատեսուած է Երեւանի «Ազատութեան» հրատարակչին վրայ։

Հոկտեմբեր 26-ին կաշնալիք հանրահաւաքը, ինչպէս «Ազատութիւն» ռատիոկայանի հետ հարցազրոյցի ընթացքին ըսած է «Հանրապետութիւն» կուսակցութեան առաջնորդ Արամ Սարգսեան, «ոչ թէ կուսակցական, այլ քաղաքացիական հանրահաւաք է լինելու»։

Սարգսեանի խօսքերով, «արտառոց» այդ հանրահաւաքի «մեխը լինելու է Հայաստանի առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանի ելոյթը»։

Բացի Տէր-Պետրոսեանի ելոյթէն, նախատեսուած են նաեւ Հայաստանի ժողովրդական Կուսակցութեան (ՀԺԿ) նախագահ Ստեփան Դեմիրճեանի եւ «Հանրապետութիւն» կուսակցութեան նախագահ Արամ Սարգսեանի ելոյթները։

«Խնդիրն այն է, որ 26-ի յաջորդ օրը Հոկտեմբերի 27-ն է, եւ միանշանակ անդրադարձ կը լինի 27-ի դէպքերին», - ըսած է Արամ Սարգսեան։ - «Կը քննարկուի քաղաքական իրավիճակը, եւ կը տրուեն լուծումներ, բանալիներ... Այստեղ

շատ կարեւոր է առաջին նախագահի մօտեցումը»։

«Իմ կարծիքով», - շարունակած է Ա. Սարգսեան, - «այդ հանրահաւաքին մասնակցելու են Հայաստանի Հանրապետութեան բոլոր քաղաքացիները՝ անկախ քաղաքական պատկանելիութիւնից։ Ես չեմ կարծում, որ նոյն հանրապետականների մօտ հետաքրքրութիւն չկայ գալ հանրահաւաքին եւ լսել Լեւոն Տէր-Պետրոսեանի խօսքը»։

Հանրահաւաքը, Սարգսեանի խօսքերով, «քաղաքական ձեւաչափեր» ստեղծելու նպատակ չունի, այլ քաղաքական իրավիճակին գնահատական տալու եւ «Հոկտեմբերի 27-ի» գոհերու յիշատակը յարգելու համար է։

Միւս կողմէ, շարունակելով քաղաքական շփումները, Հայաստանի Առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեան Հոկտեմբեր 16-ին այցելած է «Օրինաց Երկիր» կուսակցութեան գրասենեակը, ուր հանդիպում ունեցած է կուսակցութեան նախագահ Արթուր Բաղդասարեանի հետ։

Նոյն օրը, առաջին նախագահը այցելած է նաեւ «Ազատութիւն»

ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԿԱՍՔԸ ԶԳՈՐԾԱԴՐՈՂ ԴԱՏԱԻՈՐԸ ՊԱՏԺՈՒԵՑԱՒ



Դատաւոր Պարգեւ Օհանեան

Ռոբերդ Քոչարեանի հրամանագրով դադարեցուած է Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքներու առաջին ատենանի դատարանի դատաւոր Պարգեւ Օհանեանի լիազօրութիւնները։

Դատաւորի լիազօրութիւնները դադարեցնելու միջնորդութեամբ գործող նախագահին դիմած էր Արդարադատութեան Խորհուրդը, որ նման որոշում կայացուցած էր «կարգապահական վարույթի արդիւնքում»։

Հայաստանեան լրատուամիջոցներու եւ որոշ քաղաքական գործիչներու կարծիքով, Պարգեւ Օհանեանի նկատմամբ կարգապահական վարույթը իշխանութիւնները սկսած

Շաբ.ը էջ 4

ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
120-ԱՄԵԱԿԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ
Կիրակի, 4 Նոյեմբեր, 2007, երեկոյան ժամը 6:00 ին
Glendale High School-ի սրահին մէջ - 1440 East Broadway, Glendale, CA 91205
Մուտքը Ազատ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

ԻՆՉՈ՞Ւ Է ԱՆՇԱՆԳԱՍԱՅԵԼ ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԸ

ՀՀ առաջին նախագահ Լևոն Տէր-Պետրոսեանի անսպասելի այցը ԼՂՀ եւ հանդիպումը նախագահ Բակո Սահակեանի հետ շուկի մէջ գցեց շատերին:

Սակայն, ըստ ամենայնի, ամենաշատը շուկի մէջ է ընկել վարչապետ Սերժ Սարգսեանը, ով այդ այցից մի քանի օր անց շտապեց գնալ ԼՂՀ: Իհարկէ, դեռ օրեր առաջ էր ԼՂՀ-ում խօսուում, որ Ս. Սարգսեանը պետք է այցելի Ղարաբաղ՝ միջկառավարական պայմանագիր ստորագրելու համար: Բայց փաստը, որ վարչապետի այցը կասկածելիօրէն համընկել է Տէր-Պետրոսեանի այցի հետ, խօսուում է այն մասին, որ Ս. Սարգսեանը «անհանգստացած է» եւ ԼՂՀ է մեկնել՝ ամէն ինչ տեղում ձգելու համար: Իհարկէ, Սարգսեանի այցի մասին տարածուած պաշտօնական հարցազրույթները մէջ նշուում է, թէ հանդիպման ընթացքում քննարկուել են ԼՂՀ սոցիալ-տնտեսական իրավիճակին, յատկապէս՝ գիւղատնտեսութեանը առնչուող հարցեր: Սակայն բաւական է նշել մի փոքրիկ միջադէպ, եւ ակնյայտ կը դառնայ Սարգսեանի այցելութեան իրական նպատակը:

Պաշտօնական հանդիպումներին յետոյ կայացած բրիֆինգում Ս. Սարգսեանը մի ուշադրաւ յայտարարութիւն է արել: Խօսելով այն մասին, որ արդէն որոշուել է, թէ որքան միջպետական վարկ է ԼՂՀ-ին տրամադրելու ՀՀ-ն եկող տարի, Սարգսեանը ասել է. «Վարկը՝ վարկ, բայց պետք է ինքնեզրգիւղատնտեսական ապրանք արտադրէք: Վարկը ընդամէնը աջակցութիւն է, իսկ ապրանքի մեծ մասը պետք է ԼՂՀ-ում արտադրուի: Իսկ դրա նախադրեալները եւ պտտեցնելու կայ»:

Ասել է թէ՛ Սարգսեանը Սահակեանին մեսիջ է ուղարկել, որ «խելօք չմնալու» դէպքում ԼՂՀ-ն կարող է զրկուել միջպետական վարկից: Այս համատեքստում մի ուշադրաւ փաստ եւս: Տէր-Պետրոսեանի այցի մասին պաշտօնական տեղեկատուութիւնը բաւականին ժլատ էր՝ նախագահականից տարածուեց երկու տողանոց ոչինչ չասող հարցազրույթներ: Անգամ Արցախի հանրային հեռուստատեսութիւնն ընդամէնը երկու բառով անդրադարձաւ այդ հանդիպմանը: Մի խօսքով, ամէն ինչ արուեց՝ ՀՀ առաջին նախագահի այցի մասին հնարաւորին ամեն քիչ տեղեկատուութիւն տարածելու համար: Նոյնը, սակայն, չի կարելի ասել Ս. Սարգսեանի այցի մասին: Ու թէեւ պաշտօնական մակարդակով ամէն ինչ արուեց, որպէսզի առաջին նախագահի «լուռ ու համեատ» այցի ֆոնի վրայ ընդգծուի Սարգսեանի այցի ճոխութիւնը, այնուհանդերձ, ոչ պաշտօնական զրոյցներում նշուում է, որ ՀՀ առաջին նախագահի ընդունելութիւնը աւելի քան ճոխ է եղել: Մասնաւորապէս, նշուում է, որ Բ. Սահակեանի հրահանգով ՀՀ առաջին նախագահին Ստեփանակերտի մուտքի մօտ դիմաւորել է պաշտօնական պատուիրակութիւն, որի ուղեկցութեամբ էլ ՀՀ առաջին նախագահը ժամանել է նախագահական նստավայր:

Ահա թէ ինչու հարկ է աւելի ուշադիր նայել Ս. Սարգսեանի եւ Բ. Սահակեանի հանդիպման կազմերն ու լուսանկարները (ԼՂՀ-ում նման դէպքում կ'ասէին, որ Ս. Սարգսեանի դէմքից ուղղակի լեղի

էր կաթում), որպէսզի պարզ դառնայ, որ Սարգսեանը աւելի քան «մտահոգուած» է ժամանել ԼՂՀ: Թէ որքան մեծ է Սարգսեանի մտահոգութիւնը, ցոյց կը տան հետագայ զարգացումները, բայց որ այն կայ, հաստատու է նաեւ ՀՀ առաջին նախագահի քաղաքական թիմի ներկայացուցիչները:

ՀՀ վարչութեան նախագահ Արարատ Զուրաբեանի խօսքերով, ՀՀ առաջին նախագահի՝ ԼՂՀ կատարած այցելութիւնը կարեւոր էր յատկապէս նրանով, որ դա եղաւ ի հեճուկա նրանց, ովքեր յայտարարուում էին, թէ Տէր-Պետրոսեանը ուզում է Ղարաբաղը գիջել, իսկ առաջին նախագահը գնաց ցոյց տալու, որ ինքը մտահոգուած է

Բակո Սահակեանի համար աւելի ձեռնտու է լինելու աշխատել Լեւոն Տէր-Պետրոսեանի, քան Սերժ Սարգսեանի. Սարգսեանի պարագայում՝ Սահակեանը յայտնուելու է մարզպետի կարգավիճակում, իսկ Տէր-Պետրոսեանի նախագահութեան դէպքում՝ ինքը ԼՂՀ նախագահն է:

ԼՂՀ-ի ճակատագրով: «Դրանից անմիջապէս յետոյ Սարգսեանը գրեթէ ողջ կառավարութիւնը վերցրած շտապեց ԼՂՀ՝ տպաւորութիւն ստեղծելու, թէ կառավարութիւնը մտահոգուած է ԼՂՀ ճակատագրով», - նշեց Զուրաբեանը՝ յաւելելով, թէ կատարուածն ինքնին փաստում է, որ Սարգսեանը անհանգստացած է: «Հանրապետութիւն» կուսակցութեան առաջնորդ Արամ Զ. Սարգսեանն էլ ասում է, որ ինքը գնալով համոզուում է, որ Ս. Սարգսեանը պայքարում է 2-րդ տեղի համար, քանի որ կրկնում է այն, ինչ անում է ՀՀ առաջին նախագահը: Ինչ վերաբերում է Տէր-Պետրոսեանի՝ ԼՂՀ կատարած այցին, ապա Արամ Զ. Սարգսեանի կարծիքով եւս՝ Տէր-Պետրոսեանը այդ այցով հերքեց այն թէզը, թէ իբր առաջին նախագահը պատրաստուում է գիջել ԼՂՀ-ն. «Ղարաբաղը ծախող մարդուն ԼՂՀ նախագահը չէր ընդունի: Այն էլ՝ այնպիսի նախագահը, ինչպիսին Սահակեանն է, ով իր աշխատանքի բերումով տեղեկ է ամէն ինչից եւ գիտի, թէ ով է ԼՂ-ն ծախում», - նշեց Ա. Սարգսեանը: Վերջինիս գնահատմամբ, Սերժ Սարգսեանին անհանգստացնում է Տէր-Պետրոսեանի ակտիւութիւնն ընդհանրապէս, քանի որ այդ դէպքում լուրջ խնդիրներ են առաջանում թէ՛ իշխանական, թէ՛ ընդդիմադիր դաշտում: «Ես բնական եմ համարում եւ չեմ զարմանում, որ Սարգսեանը դրանից պիտի անհանգստանայ», - յայտարարեց Ա. Սարգսեանը՝ ընդգծելով, որ կոնկրետ Բակո Սահակեանի համար աւելի ձեռնտու է լինելու աշխատել Լեւոն Տէր-Պետրոսեանի, քան Սերժ Սարգսեանի հետ. «Սարգսեանի պարագայում՝ Սահակեանը յայտնուելու է մարզպետի կարգավիճակում, իսկ Տէր-Պետրոսեանի նախագահութեան դէպքում՝ ինքը ԼՂՀ նախագահն է», - նշեց Արամ Զ. Սարգսեանը:

ՔՐԻՍՏԻՆԷ ԽԱՆՈՒՄԵԱՆ «ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ»

ՄԻԱՍՆՈՒԹԵԱՆ ԳԱՂԱՓԱՐԻ ԿԵՐԱԴԱՐՁ

Լեւոն Տէր-Պետրոսեանի վերադարձը մեծ քաղաքականութիւն մի դրական արդիւնք արդէն իսկ տուել է: Հասարակութեան մէջ եւ քաղաքական դաշտում կրկին շրջանառութեան մէջ է դրուել համագրային միասնութեան անհրաժեշտութեան գաղափարը:

Յիշուում էք, թէ ինչ մակարդակի վրայ էին Հայաստանի «ներքաղաքական զարգացումները» ընդամէնը մի քանի տարի կամ նոյնիսկ մի քանի ամիս առաջ: Քաղաքական ուժերն օրումէջ միանում-բաժանուում էին, դաշինքներ էին կազմում ու քանդում, կարեւորագոյն քաղաքական թեմաներն էլ սրանք էին՝ իշխանութիւններն այսինչ կուսակցութեան ղեկավարին օֆիսի տարածք տուեցին ու իրենց կողմը քաշեցին, կամ մի ուրիշին պաշտօն խոստացան, կամ երրորդին «մի գրօ պակաս» տուեցին եւ այլն: Քաղաքական դաշտը բառիս բուն իմաստով վերածուել էր մանրածախ շուկայի:

Ահա հենց այս իրավիճակում էլ Լեւոն Տէր-Պետրոսեանը մեծ քաղաքականութիւն վերադառնալու յայտ ներկայացրեց եւ առաջին հերթին արձանագրեց այն իրողութիւնը, որ Հայաստանի առջեւ կանգնած են լրջագոյն ազգային-պետական խնդիրներ, որոնց շուրջ բոլոր քաղաքական ուժերը պետք է համախմբուեն՝ եթէ ոչ միասնական ուժերով այդ խնդիրները լուծելու, ապա գոնէ միասին դրանք քննարկելու համար: Կեանքում էլ է այդպէս լինում: Ասենք, վթարային շնչում բոլորը զբաղուած են մանր-մունր կենցաղային վէճերով, մինչեւ յայտնուում է մէկն ու բոլորին կոչ անում գոնէ միասնաբար քննարկել ընդհանուր պրոբլեմները:

Հիմնական քաղաքական ուժերը, բնականաբար, ընդունեցին այս իրողութիւնը, եւ սկսուեց քաղաքական «սենսացիաների» շղթան (Լեւոն Տէր-Պետրոսեանի հանդիպումը ՅՅԴ-ի եւ Վազգէն Մանուկեանի հետ): Իհարկէ, իրականում ոչ մի սենսացիա չկար, որովհետեւ ցանկացած քաղաքական ուժ կամ անհատ, ով գիտակցում է, որ Հայաստանն իսկապէս լրջագոյն խնդիրների առջեւ է կանգնած, պատրաստ պիտի լինի մի կողմ դնել անձնական կամ գաղափարական տարաձայնութիւնները եւ քննարկել ստեղծուած ծանրագոյն իրավիճակը: Այսպիսով կարելի է ասել, որ կուսակցային միասնութեան հիմքերը, եւ անկախ նրանից՝ ինչով կ'աւարտուի այս ամէնը, եւ ինչ արդիւնքներ կ'արձանագրուեն նախագահական ընտրութիւններում, մի բան ակնյայտ է՝ հետագայում եւս այս աւանդույթը կը շարունակուի: Յամենայն դէպս, քաղաքական յարաբերութիւնների մշակույթի նշաձողը կտրուկ բարձրացաւ: Եթէ նկատել էք, Տէր-Պետրոսեանի ակտիւացումից յետոյ քաղաքական ուժերն իրենց յայտարարութիւններում շատ աւելի լուրջ են ու կոռեկտ:

Անհասկանալի հիստերիայի մէջ է միայն իշխանական մամուլը: Սրանք խուճապի են մատնուել այն մտքից, որ նոյնիսկ տարբեր քաղաքական հայեացքներ ունեցող ու նախկինում լրջագոյն տարաձայնութիւններ ունեցող ուժերը կարող են շրջանցել այդ կնճռոտ հարցերը: Սրանք աշուձախ մերթ դաշնակցականների վրայ են յարձակուում, մերթ վազգէն Մանուկ-

եանի, ու մեղադրանքը նոյնն է՝ ինչպէ՞ս էք համարձակուում մոռանալ անցեալը: Երեւում է՝ Սերժ Սարգսեանը մեծ յոյսեր էր կապել այս ուժերի՝ «անցեալը մոռանալ չկարողանալու» հետ, ու հիմա ինքն էլ է խուճապի մէջ յայտնուել:

Ինչու՞: Որովհետեւ Հայաստանի առջեւ կանգնած լրջագոյն խնդիրների հենց միայն արձանագրումը եւ դրանց լուծման անհրաժեշտութեան գիտակցումն արդէն իր համար կործանարար են: Ի վերջոյ, Քոչարեանն ու Սերժ Սարգսեանը տասը տարի կարողացել են իրենց իշխանութիւնը պահպանել հենց այն բանի շնորհիւ, որ քաղաքական ուժերը համապետական խնդիրների շուրջ համախմբուելու փոխարէն զբաղուել են «կենցաղային» վէճերով:

Բնականաբար, Սերժ Սարգսեանն ու նրա թիմը հիմա պիտի ամէն ինչ անեն, որպէսզի քաղաքական ուժերը «վերջին անցեալը», թարմացնեն երբեմնի անհանդուրժողականութիւնը եւ դրանով իսկ իր համար ճանապարհ հարթեն դէպի բաղձալի աթոռ: Բայց իրողութիւնն այն է, որ Հայաստանը պիտի լուծի ոչ թէ անցեալի, այլ ապագայի պրոբլեմները: Իսկ դրանք հնարաւոր է լուծել միայն համախմբելով քաղաքական ողջ դաշտը:

Յամենայն դէպս, Լեւոն Տէր-Պետրոսեանը կատարեց առաջին քայլը եւ անսպասելիօրէն լայն ըմբռնում գտաւ: Նշանակուում է՝ անցած ինը տարիների ընթացքում Քոչարեանին ու Սերժին չի յաջողուել ամբողջովին ոչնչացնել քաղաքական դաշտը: Իսկ սա արդէն յաջողութիւն է: Մեծ յաջողութիւն:

ՄԱՐԿ ՆՇԱՆԵԱՆ «ԶՈՐՐՈՐԴ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ»

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝ ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏԻԱՆ ՀՆՁՄԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ Արեւմտեան Ամերիկայի Մրջամի
ԽՄԲԱԳԻՐ՝ ՏՕԲԸ ԱՐՇԱԿ ՂԱԶԱՆԾԵԱՆ ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ՝ ՍԱՅԱԿ ԹՈՒԹԵԱՆ ՎԱԶԳԵՆ ԽՈՍՏԱՆԵԱՆ ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ԴԱԻԹԵԱՆ
Գե. (626) 797-7680 Ֆաքս. (626)797- 6863 E:Mail: massis2@earthlink.net http://www.massisweekly.com
MASSIS Weekly Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA 1060 N. Allen Ave. Pasadena, CA 91104 Phone: (626) 797-7680 Fax: (626) 797-6863 (USPS 667-310) (ISSN 0744-334X) Published Weekly Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES: USA \$50.00, Canada \$60 (Second Class), \$75.00 (Air Mail) Overseas \$85.00 (2nd Class Mail), \$125.00 (Air Mail). All payments must be made in US funds & Drawn on US banks. Periodicals Postage Paid at Pasadena CA. Please Send Address Change To MASSIS WEEKLY 1060 N. Allen Ave. Pasadena, CA 91104

ԼՈՒՐԵՐ

ԵՐԿՈՒ ՏԱՍՆԵԱԿԻՑ ԱԲԵԼԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐ ԿՈՉ ԵՆ ԱՆՈՒՄ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼ ՆԱԽԱԳԱՅԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՆ

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»: Ուրբաթ, Հոկտեմբեր 12-ին Երեւանում տեղի ունեցավ շուրջ 25 հասարակական, քաղաքական կազմակերպությունների ներկայացուցիչների հաւաք, որի մասնակիցները Հայաստանի առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանին կոչ են արել մասնակցել 2008-ի նախագահական ընտրություններին՝ պատրաստակամութիւն յայտնելով համակողմանի աջակցութիւն ցուցաբերել նրան:

Հաւաքի մասնակիցների բնորոշմամբ, իրենք հաւաքուել էին՝ ի մի բերելու նախկինում արտայայտած դիրքորոշումներն ու տեսակէաները:

ՀՀԾ-ի վարչութեան փոխնախագահ Անդրանիկ Յովակիմեանը «Ազատութիւն» ռադիոկայանին փոխանցեց, որ հաւաքն աւելի շատ կազմակերպական էր. «Սօսուեց Տէր-Պետրոսեանի առաջադրման անհրաժեշտութեան մասին: Հետագայում երեւի արդէն կը ստեղծուի աւելի փոքր խումբ, որը դա կը ձեւակերպի եւ կը ներկայացնի»:

Ազատական առաջադրման կուսակցութեան ղեկավար Յովհաննէս Յովհաննիսեանը վստահեցրեց, թէ հաւաքին ներկայ են գտնուել այն քաղաքական ուժերի եւ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները, որոնք վերջնական որոշում են կայացրել Լեւոն Տէր-Պետրոսեանին սատարելու վերաբերեալ: Յովհաննիսեանը, սակայն, գտնում է, որ հաւաքուել են Լեւոն Տէր Պետրոսեանին սատարողների ընդամէնը մի մասը:

«Բոլոր ելույթներում շեշտադրուած էր, որ իրապէս իրավիճակը շատ ծանր է, օրհասական է, մարտահրաւէրները շատ ծանր են», - «Ազատութիւն» ռադիոկայանին

ասաց Յովհաննէս Յովհաննիսեանը: «Բոլոր ելույթներում կարծիր թելով գնում էր մի միտք, որ այդ վիճակը պիտի փոխուի, երկրում անհրաժեշտ են լուրջ բարեփոխումներ, փոփոխութիւններ: Եւ բոլորը յանգում էին նրան, որ դա հնարաւոր է անել միայն եւ միայն Լեւոն Տէր-Պետրոսեանի վերադարձով եւ նրան լուրջ քաղաքական յենարան ստեղծելով»:

Ազատական առաջադրման կուսակցութեան ղեկավարի փոխանցմամբ, առաջիկայում կը ստեղծուի աշխատանքային փոքր խումբ, որը կը համակարգի բոլոր գործողութիւնները:

Հաւաքի մէկ այլ մասնակցի՝ Սոցիալ դեմոկրատ հնչակեան կուսակցութեան ատենապետ Լիւդմիլա Սարգսեանի եւ իր կուսակիցների համար յստակ է, որ Լեւոն Տէր-Պետրոսեանն առաջադրուելու է:

«Նպատակը Լեւոն Տէր-Պետրոսեանը չէ», - ասաց Լիւդմիլա Սարգսեանը՝ շարունակելով. «Նպատակն է՝ ունենալ նորմալ երկիր, որտեղ մեր երեխաները ապագայ ունեն: Իսկ այսօր մենք տեսնում ենք, որ այդ ապագան մեզ կարող է ապահովել այն թիմը, որը ձեւաւորուած է, եւ այդ թիմի հետ միասին այն նախագահը, որին կ'առաջադրի այդ թիմը: Մենք այսօր այդ նախագահի դերում տեսնում ենք Լեւոն Տէր-Պետրոսեանին»:

«Այստեղ խնդիրը մէկն է, որ Լեւոն Տէր-Պետրոսեանը որեւէ կուսակցութիւնով չի առաջադրուելու», - ասաց հաւաքի մասնակիցներից «Հանրապետութիւն» կուսակցութեան ղեկավար Արամ Սարգսեանը: «Լեւոն Տէր-Պետրոսեանը առաջադրուելու է քաղաքացիական նախաձեռնութեամբ»:

ՏԵՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆԸ ԿԸ ՓՈԽԻ ՀՀԿ-Ի ՌԱԶՄԱԿԱՐՈՒԹԻՒՆ

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»: «Լեւոն Տէր-Պետրոսեանի առաջադրման դէպքում քաղաքական դաշտն անպայման կ'ենթարկուի վերաձեւաւորումների», - յայտարարեց Աժ-ում «Ժառանգութիւն» խմբակցութեան պատգամաւոր Վարդան Խաչատրեանը:

Ինչ վերաբերում է ՀՀԿ առաջնորդ Սերժ Սարգսեանի այն յայտարարութեանը, թէ Տէր-Պետրոսեանի առաջադրմամբ ՀՀԿ-ի ռազմավարութիւնը չի փոխուի, ապա Վարդան Խաչատրեանը վստահեցրեց, որ Տէր-Պետրոսեանի քաղաքական կշիռը կը ստիպի իրենց ռազմավարութիւնը փոխել բոլոր ուժերին: Նրա կարծիքով այսօր քաղաքական դաշտի հիմնական կուռնանը՝ ընդդիմութեան միասնական թեկնածուով հանդէս գալու-չգալու խնդիրն է:

«Իմ խորի համոզմամբ մենք օբիեկտիւ չենք պատկերացնում երբ խօսում ենք այս մասին: Եթէ ընդդիմութիւնից առաջադրուի միասնական թեկնածու, ապա նրա հնարաւորութիւնները միանգամից կը կրճատուի 10 անգամ: Մենք բոլոր պատկերացնում ենք, որ քաղաքական պայքարի մէջ որքան դեր է զբաղեցնում հեռուստաէկրանը: Եթէ լինելու է մէկ թեկնածու,

եւ նրան հակադրուող 10 թեկնածուներ, ապա բարդութիւնը միանգամայն պարզ է: Եթէ անգամ լինի միասնական թեկնածու է, ապա տեխնոլոգիայէն նա պէտք է իրականացուի մրցավազքում»:

Վարդան Խաչատրեանը, իրեն համարելով ընտրական գործընթացների խորը շերտերում եղած մարդ, վստահեցրեց, որ չի կարելի ընտրութիւններին գնալ միասնական թեկնածուով: Ինչ վերաբերում է «Ժառանգութիւն» կուսակցութեանը, ապա Վարդան Խաչատրեանը տեղեկացրեց, որ կուսակցութիւն այս ընթացքում բանակցային գործընթացներ է վարում՝ իւրաքանչիւր ուժի, թեկնածուի տեսակէտները, ապագայի տեսլականը պարզելու համար:

«Մենք պէտք է յստակ պատկերացնենք, թէ իւրաքանչիւր թեկնածու ինչ դաւանանքի է»: Խաչատրեանի խօսքերով՝ «Ժառանգութիւնը» այնքան մանրամասնօրէն է ուղղմանսիրելու բոլոր թեկնածուներին, որ ընդհուպ հարց է տալու, թէ օրինակ՝ ապագայ թեկնածուն կասեցնելու է «Օպերատիւ հետախուզութեան գործունէութեան մասին» ՀՀ օրէնքը, որը Աժ-ն պատրաստում է ընդունել 3-րդ ընթացքամբ եւ որն իր հետ 37 թիւ է բերելու:

ԲՈՂՈՔԻ ՅՈՅՑ ԳԱՌՆՈՒ ԿԻՐՃԻ ՔԱՐԵՐԻ ՔԱՆԴՄԱՆ ԴԵՄ

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»: «Մի լուրջ դեպք Գառնու սիմֆոնիան», «Պահանջում ենք պատժել մեղաւորներին», «Գողանում են ազգային հարստութիւնը» ցուցապատաւորներով Հոկտեմբեր 15-ին մի շարք բնապահպանական հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, ինչպէս նաեւ այլ շահագրգիռ անձինք կառավարութեան շէնքի առաջ իրենց բողոքի ձայնն էին բարձրացնում, որ բնական յուշարձանները, մասնաւորապէս Գառնու կիրճի հարստութիւնը վտանգի տակ է:



Երեւանի մէջ բողոքի ցույց՝ ի պաշտպանութիւն Գառնու կիրճի հարստութեան

«Մենք պահանջում ենք, որ նրանք, ովքեր Գառնու կիրճից այդ քարերը տարել են, պատասխանատուութեան ենթարկուեն: Քարէ յուշարձանները վերածուել են քարէ հանքավայրի, որտեղից արտահանում են շինանիւթ առանձնատների շինարարութեան, յատակի տալիկապատման, հեթանոսական սանձարի մամողջ ճանապարհը սարքելու համար»,- ասում էր ակցիայի մասնակից, Ազգային ժողովին կից երիտասարդական խորհրդարանի առողջապահական եւ բնութեան պահպանութեան հարցերի խորհրդի նախագահ Տիգրան Սիմոնեանը:

Ըստ ցուցարարների՝ գործընթացը եղել է դեռեւս երկու տարի առաջ, սակայն կառավարութեան որոշմամբ այն կասեցուել է, իսկ վերահսկողութիւնը տրուել է Գառ-

նու գիւղապետարանին. «Մէկ ամիս է նոր թափ է ստացել այդ վանդալիզմը»:

Որոշ հաշուարկներով, Գառնուից դուրս բերուող քարի իւրաքանչիւր կտորը վաճառուած է 250 դրամով: Քարերը, ըստ բողոքի ակցիայի մասնակիցների, օգտագործուել են Ազգային պատկերասրահի տնօրէն Փարաւոն Միրզոբեանի առանձնատան շինարարութեան, Տարածքային կառավարման նախարար Հովիկ Աբրահամեանի անունով Արտաշատում կառուցուող եկեղեցու համար:

«Չի կարելի բնութեան հրաշքը ոչնչացնել, թէ ինչ է իմ անունով եկեղեցի կառուցեմ: Արտաշատում մի եկեղեցի է կառուցուած, որը կոչուած է սուրբ Յովհաննէս եկեղեցի: Կամ հայկական մշակոյթ ներկայացնող հիմնարկի տնօրէնը յուշարձան է ոչնչացնում»,- դժգոհեց «Թրանսփերենսի ինտերնեյշնալ»-ի ներկայացուցիչը:

ՀԺԿ-Ն ԿՈՂՄՆԱԿԻՑ Է «ԴԱՇԻՆՔԱՅԻՆ ԹԵԿՆԱԾՈՒՈՎ ՀԱՆԴԵՍ ԳԱԼՈՒՆ»

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»: Արտախորհրդարանական ընդդիմադիր ուժերից Հայաստանի ժողովրդական կուսակցութիւնը (ՀԺԿ) կողմնակից է առաջիկայ նախագահական ընտրություններում «դաշինքային թեկնածուով» հանդէս գալուն:

Լրագրողների հետ հանդիպման ժամանակ Ստեփան Դեմիրճեանի գլխաւորած կուսակցութեան քարտուղար Գրիգոր Յարութիւնեանը յայտարարեց, որ ՀԺԿ-ն «ակտիվ մասնակցութիւն է ունենայու» 2008-ի նախագահական ընտրություններին:

ՀԺԿ-ն, ըստ Յարութիւնեանի, կարող է առանձին մասնակցել ընտրութիւններին, բայց իրենք կողմնակից են «դաշինքային թեկնածուով» հանդէս գալուն:

«Որովհետեւ», - պարզաբանեց ՀԺԿ-ի քարտուղարը, - «իրականութիւնն այն է, որ այսօրուայ բիրտ ուժի դէմ, իշխանական ռեսուրսի դէմ... պէտք է համախմբուել եւ պէտք է միասնական թեկնածու: Այս ռե-

ժիմի դէմ [պայքարելու] միակ ճանապարհը համախմբումն է: Առանձին հանդէս գալը այսօր ճիշդ չէ, դատապարտուած է»:

Յարութիւնեանը չբացատրեց, որ միասնական թեկնածուն լինի երկրի առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանը:

Չհերքելով նախորդ իշխանութիւնների օրօք բացասական երեւոյթների առկայութիւնը՝ Յարութիւնեանը ասաց. - «Այն բոլոր բացասական երեւոյթները, որ ձեւաւորուել էին նախորդ իշխանութիւնների ժամանակ, աննախադէպ չափերի են հասել հիմա: Հարիւրապատիկ, հազարապատիկ աւելացել են»:

«Այսօր կոռուպցիան, կաշառակերութիւնը այնպիսի չափերի հասել մեր երկրում, որ հնարաւոր չէ զարգացում», - յայտարարեց նա՝ պնդելով, որ ՀԺԿ-ի խնդիրն այսօր երկրում նորմալ իշխանափոխութիւն ապահովելն է, որ «ժողովուրդն ընտրի իր իշխանութիւնը»:

ԱՆՊԱՏԺԵԼԻՈՒԹԵԱՆ ՎԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

Հոկտեմբերի 11-ին «Առաւօտ» օրաթերթի խմբագրութիւն են ներխուժել մի խումբ անձինք եւ հայհոյանքներ տեղալով չարձակում գործել լրագրող Ռուզան Մինասեանի վրայ՝ փորձելով հաշուեյարդար տեսնել թերթի նախորդ օրուայ մի հրապարակման համար: Լրագրողը ստացել է մարմնական վնասուածք եւ անցել է դատաբժշկական փորձաքննութիւն: Յարուցուած է քրէական գործ:

Երեւանի մամուլի ակումբը, Հայաստանի ժողովարանի փոխնախագահ Մարտին Մարտինեանը, իրաւապաշտպանութեան կոմիտէն դատապարտել են լրագրողի դէմ իրականացուած հերթական բռնարարը, պահանջելով որ մեղաւորները, որոնք այս անգամ յայտնի են, պատասխանատուութեան ենթարկուեն օրէնքի պահանջներին համապատասխան:

ԼՈՒՐԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՈՒ ՎՐԱՍՏԱՆԸ ԿԸ ՁԳՏԵՆ ՍՏԵՂԾԵԼ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԴԱՇՏ

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»:
Հայաստանն ու Վրաստանը, ինչպես այսօր կայացած հայ-վրացական տնտեսական համագործակցության միջկառավարական յանձնաժողովի 6-րդ նիստի չորսօրյակի ստորագրման արարողություններից մեկը, լրագրողներին ասացին Հայաստանի և Վրաստանի վարչապետներ Սերժ Սարգսեանը և Ջուրաբ Նոդարիդեին, կը ձգտեն ներդրողներին ներկայանալ որպես միասնական դաշտ:



Սերժ Սարգսեան և Ջուրաբ Նոդարիդեի չորսօրյակի ստորագրման արարողութեան ընթացքին

«Մենք արդէն սկսում ենք աշխատել այն ուղղութեամբ, որ Հայաստանն ու Վրաստանը ներդրողներին, բոլոր նրանց, ովքեր ցանկանում են աշխատել մեզ համար, ներկայանան որպես մէկ ընդհանուր ներդրումային դաշտ», - ասաց Նոդարիդեին:
Հայաստանի վարչապետը բարձր գնահատեց հայ-վրացական տնտեսական համագործակցության միջկառավարական յանձնաժողովի գործունէութիւնը:
«Ես կիսում եմ պարոն Նոդարիդեի կարծիքը այն մասին, որ հիմա արդէն բոլորովին այլ խնդիրներ ենք քննարկում», - ասաց Սերժ Սարգսեանը: - «Եթէ մի քանի տարի առաջ մենք քննարկում էինք, թէ ինչպէս պիտի անենք, որ մեր բեռները Վրաստանի տարածքով նորմալ գան, էլեկտրակայանները և այլ խնդիրներ, հիմա շատ աւելի բարձր որակի, մեր ժողովուրդներին համար աւելի կարեւորութիւն ներկայացնող հարցեր ենք քննարկում: Այդ

հարցերից մէկն էլ հենց այդ ընդհանուր դաշտի, ընդհանուր շուկայի ձեւաւորման խնդիրն է»:
Հայաստանի կառավարութեան տեղեկատուութեան և հասարակայնութեան հետ կապերի վարչութեան փոխանցմամբ, Ջուրաբ Նոդարիդեին գոհունակութեամբ է խօսել էներգետիկայի, տրանսպորտի ոլորտներում հաստատուած համագործակցութեան մասին: Նա յայտնել է որ այժմ Վրաստանում աշխատանքներ են իրականացնում միւս տարրերից ավտոմոբիլային ճանապարհները, այդ թւում՝ Նինոծմինդա - Ախալքալաքի միջին Բաթումի, բարեկարգելու ուղղութեամբ, ինչը, ըստ նրա, մօտ 200 կիլոմետրով կը կարճացնի նշուած ճանապարհահատուածը և զգալիորէն կը նպաստի նաեւ զբօսաշրջութեան աշխուժացմանը:
Վրաստանի վարչապետը խօսել է երկաթուղային ճանապարհով փոխադրումների թողումակութեան մեծացման կարեւորութեան մասին: Նոդարիդեին հեռանկարային է համարել քիմիայի, վերամշակող արտադրութեան բնագաւառներում գործակցութիւնը:

ՊՈԼՍՈՅ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԸ ԴԵՍ Է ԹԻՒ 106 ԲԱՆԱՁԵԻՆ

ԵՐԵՒԱՆ, «ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»:
Պոլսոյ հայոց պատրիարք Մեսրոպ Մուժֆեանը հանդէս է եկել ընդդէմ ԱՄՆ-ի Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի արտաքին գործերի յանձնաժողովում ընդունուած Հայոց ցեղասպանութիւնը ճանաչող բանաձեւի:
«Թրքիչ Տէյլի Նիւզ»-ի փոխանցմամբ, Հայոց պատրիարքը, մասնաւորապէս, ասել է. - «Մեզ անհանգստացնում է այն, որ այդ բանաձեւը կ'ազդի Թուրքիայում ապրող հայերի վրայ: Մենք դէմ ենք դրան»:
Մեսրոպ արքեպիսկոպոս Մուժֆեանը յաւելել է, թէ պատրաստուած է նամակ գրել Միացեալ Նահանգների իշխանութիւններին՝ կոչ անելով կանխել բանաձեւի քուէարկութիւնը Ներկայացուցիչների պալատի լիազօրմար նիստում:

ԻՍՐԱՅԷԼԻՆ ՄՏԱՅՈՒՄ Ե ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՐՑՈՎ ԲԱՆԱԿԵՐ

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»:
Իսրայէլը մտահոգութիւն է յայտնել Հայոց ցեղասպանութեան հարցով բանավէճի առնչութեամբ:
«Մենք Թուրքիայի մտահոգութիւնները շատ լուրջ ենք ընդունում: Մենք գերազանց յարաբերութիւններ ունենք Թուրքիայի հետ», - յայտարարել է Իսրայէլի արտգործնախարարութեան խօսնակ Մարկ Ռեզեբը:
Նա յայտնել է, որ Հայոց ցեղասպանութեան հարցում Իսրայէլի քաղաքականութիւնում «փոփոխութիւն չկայ»:
«Աստիճայով փրկեալ» գործակալութեան վկայութեամբ, Իսրայէլը ընդունում է, որ հայերի դէմ ջարդեր են գործադրուել, սակայն ձեռնպահ է մնում դրանք «ցեղասպանութիւն» որակելուց:
Այս տարի աւելի վաղ, երբ Իսրայէլի խորհրդարանում քննարկուում էր Հայոց ցեղասպանութեան ճանաչման հարցը, արտգործնախարար Յիպի Լիվնին մտավախութիւն էր յայտնել, թէ նման բանաձեւի ընդունումը կարող է ապակայունացնել Թուրքիայի հետ յարաբերութիւնները:
«Որպէս հրեաներ եւ իսրայէլացիներ՝ մենք Օսմանեան կայսրութեան վերջին տարիներին հայերի դէմ գործադրուած կոտորածները չի շատ կելու բարոյական պարտաւորութիւն ունենք», - յայտարարել էր Լիվնին՝ յոյս յայտնելով, որ «երկու կողմերը կարող են հասնել բաց երկխօսութեան, որը նրանց հնարաւորութիւն կը տայ դարմանել բաց մնացող վէրքերը»:
Այս շաբաթ Թուրքիայի արտգործնախարար Ալի Բաբաջանը Իսրայէլում արտգործնախարար Լիվնիի հետ քննարկել էր ԱՄՆ-ի Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատում շրջանառուող Հայոց ցեղասպանութեան բանաձեւի հարցը՝ Իսրայէլին յորդորելով օգտագործել վաշինգտոնում ունեցած իր ազդեցութիւնը՝ բանաձեւի ընդունումը թոյլ չտալու համար:

ԹԻՒ 106 ԲԱՆԱՁԵԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

Շաբուճակուած էջ 1-էն
կալութեան ու Հայաստան արտաքստումներու մասին տեղեկութիւնները հաստատած է նաեւ Սեւծովեան Տնտեսական Համագործակցութեան կազմակերպութեան ներս Հայաստանի ներկայացուցիչ Կարէն Միրզոյեան, որու նստավայրը Պոլիս է:
«Չաման» թերթը կը գրէ որ, «քանի դեռ հայերը կը շարունակեն հակաթրքական արշաւները, Թուրքիա կը գտնուի խիստ, եւ անպատիժ չի ձգեր իր տարածքին վրայ ապօրինի գումարներ աշխատող անոնց բարեկամները»:
Թուրքիոյ վրէժխնդիր այս դրսեւորումի մասին ՀՀ արտաքին գործերու նախարարութեան «Ա.1+»-ին յայտնած են, որ այժմ մանրամասն ուսումնասիրութիւններ կը կատարուին, արտաքստումներու մասին ճշգրիտ տեղեկութիւններ հաւաքելու համար:
«Երբ հայաստանցիները սովորին փակ սահմաններու մէջ ու դատարկ ստամոքսով ծամեն ցեղասպանութեան ծամոնը, ամբրիկահայերուն մենք կը չի շեցնենք արեւմտեան քաղաքակրթութեան ու թուրքերու ժամանակուայ բարութեան մասին», - գզուչացուցած է «Թըրքիչ Տէյլի Նիւզ» թերթը:
Կարգ մը թուրք մեկնաբաններ Բանաձեւի ընդունումը կը նկատեն իրենց երկրի վարած քաղաքականութեան ձախողութիւնը:
«Թըրքիչ Տէյլի Նիւզ» թերթը վերլուծելով Գոնկրէսի արտաքին յարաբերութեան յանձնաժողովէն ներս տեղի ունեցած քուէարկութեան արդիւնքները կը յայտնէ, որ Թուրքիա չէ յաջողած ապահովել յանձնաժողովի հրեայ անդամներու բանաձեւին «դէմ» ձայները: 8 հրեայ գոնկրէսականներէն 7-ը կողմ քուէարկած է բանաձեւին, այն պարագային երբ, ըստ թերթի, թրքական դիւանագիտութիւնը մեծ ջանքեր գործադրած է՝ յանձնաժողովի հրեայ անդամներուն մօտ, իրենց կողմը գրաւելու համար:
«Արդիւնքները ցոյց տուին, որ այդ ջանքերը, ինչպէս նաեւ Իսրայէլի հետ յարաբերութիւնները փճացնելու Անգարայի սպառնալիքները, սպառնութիւն չեն գործած հրեայ գոնկէսականներու վրայ», - թերթը: Իսկ նոյն թերթի յայտնի մեկնաբան Մեհմեդ Ալի Պիրանդ իր յօդուածին մէջ կ'արձանագրէ, որ Բանաձեւի վերջնական ընդունումը մեծ վնաս կը հասցնէ Թուրքիոյ չեղինակութեան, վստահութիւն կը հաղորդէ հայերու պաշարին, միւս բոլոր երկրները մէկը միւսի ետեւէն կը ճանչնան ցեղասպանութիւնը, քանի որ այլեւս չեն կրնար ընդդիմանալ հայերու ճնշումներուն: Ըստ Պիրանդի, այն, ինչ տեղի կ'ունենայ այսօր, վերջին 50 տարուայ ընթացքին Թուրքիոյ սխալ քաղաքականութեան արդիւնք է:
Այս կապակցութեամբ «Ռոյթթըր» կը տեղեկացնէ որ, Անգարան ամսական աւելի քան 300 հազար տոլար ծախսած է Բանաձեւի հակաքարոզչութեան վրայ: Ուաշինկթընի Թուրքիոյ դեսպանատունը 100 հազար տոլար վճարած է «DLA Piper» լոբիստական ընկերութեան, 105 հազար տոլար՝ «Livingston Group», եւ 114 հազար տոլար՝ «Fleishman-Hillard» ընկերութիւններուն:

ՍԱՐԳԱՐԻՏԱ ՍԱՐՈՒԻՆԱՆԵԱՆԸ՝ «ՄԻՍՍ ՀԱՅԱՍՏԱՆ - 2007»

«Միսս Հայաստան - 2007» տիտղոսին եւ փոխանցիկ թագին է արժանացել Երեւանը ներկայացնող 18-ամեայ Մարգարիտա Սարուխանեանը:
Եթէ որեւէ պատճառով «Միսս Հայաստան»-ը չկարողանայ կատարել իր պարտականութիւնները, թագը եւ տիտղոսը կ'ստանայ Արփինէ Աթոյեանը:
7 հազար դոլար արժողութեամբ փոխանցիկ թագը այս տարուայ նորամուծութիւնն է, այն ամբողջովին պատրաստուած է ոսկուց եւ զարդարուած է ադամանդներով ու այլ թանկարժէք քարերով:
«Միսս Հայաստան» գեղեցկութեան եւ նրբագեղութեան մրցոյթի



Եզրափակիչ դուրս եկած 18 աղջիկները հանդէս են եկել ազգային տարազով, լողագեղատով եւ երեկոցեան հազուատով:
Վերջին փուլ դուրս եկած եօթնեակին ժլերին նաեւ հարցեր է տուել:

«ՀՈԿՏԵՄԲԵՐ 27-Ի» ՏԱՐԵԼԻՁԻՆ ԱՌԹԻ ՀԱՆՐԱՅՈՒԹՅԱՆ

Շաբուճակուած էջ 1-էն
նախնականի երեւանեան գրասենեակը եւ գրուցած է խմբագրութեան աշխատակիցներուն հետ:
«Շատ հարցերի պատասխան-

ներ դուք կը ստանաք Հոկտեմբերի 26-ին կայանալիք հանրահաւաքում», - ըսած է Լեւոն Տէր Պետրոսեան ռատիոկայանի աշխատակիցներուն:

ԴԱՏԱԻՈՐԸ ՊԱՏՈՒԹԵՑԱԻ

Շաբուճակուած էջ 1-էն
էին այն պատճառով, որ դատաւորը արդարացնող դատավճիռ արձակած էր «Ռոնալ Արմենիա» ընկերութեան ղեկավարներու նկատմամբ: Անոնց դէմ դատական գործ սկսած էր, երբ անոնք մերժած էին կաշառք վճարել Մաքսային Ծառայութեան

ղեկավարներուն:
«Այն խախտումները, որոնք արձանագրուել էին կարգապահական վարոյթի ընթացքում, աննշան էին եւ հետեւանք չառաջացնող: Եւ հենց դա էլ հիմք է տալիս պնդելու, որ ես հետապնդում եմ դատավճռի համար», - յայտարարեց Պարգեւ Օհանեան:

ՔԱՂԱՔԱԿԱՆ

**ՀԱՅԿԱԿԱՆ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՃԱՆԱԶՈՒՄ
27 ԹԵՐ, 21 ԴԷՍ**

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍԱՂԻՆԱՆ

ՆԱԽԱԲԱՆ

Հայկական Յեղասպանության ճանաչման գողգոթային մէջ, 35 այլ երկիրներու կարգին, կարծես որոշ չառաջխաղացք մը արձանագրուեցաւ ամերիկեան քաղաքական կեանքէն ներս: Բարդ կառուց ունի ամերիկեան քաղաքական դաշնակցային դրուժիւնը: Ընդհանուր կերպով, Ամերիկան կը ղեկավարուի երեք յատուկ միաւորներով – Սպիտակ Տուն, ուր կը գտնուի կառավարութեան գործադիր մարմինը, այսինքն նախագահը, իր օգնականներով, Գոնկրէսը, այսինքն Օրէնդիր մարմինը, իր ներկայացուցիչներու Տունով եւ Սենատով, եւ Գերագոյն Ատենանը, իր կազմով: Սկզբունքով, այս երեք ատենաները իրարու հակիչ-լրացուցիչ հանգամանք ունին, որ թէքնիք բացատրութեամբ, անգլերէնով կը ճանչցուի իբրեւ «checks and balances» դրուժիւն: Թէեւ երկրի Սահմանադրութեամբ, գրեթէ ճշդուած են այս երեք միաւորներու իրաւասութիւններն ու փոխյարաբերութիւնները, սակայն պարագաներ կրնան ստեղծուիլ որ, օրինակի համար, Սպիտակ Տունը, այս պարագային անոր ներկայ բնակիչը, Ճորճ Պուշ, ինքնիրեն իրաւասութիւններ տայ, առանց միւս երկու միաւորներու հետ խորհրդակցելու: Այս պատճառաւ, կողմերու միջեւ կրնան «անախորժ» երեւոյթներ պատահիլ: Եւ պատահեցան ալ որոնց մասին իրազեկ ընթերցողները լաւատեղեակ են, մանաւանդ ահաբեկչութեան դէմ պայքարի լուրջ հարցերով:

**ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐՈՒ ՏԱՆ
ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԸ**

Այս ընդհանուր մուտքէն ետք, տեսնենք թէ ի՞նչ պատահեցաւ Չորեքշաբթի, 10 Հոկտեմբերին, քաղաքական գետնի վրայ: Օրէնդիր Մարմնի, այսինքն Գոնկրէսի գործերը կը ղեկավարուին առանձին յանձնախումբերով: Արտաքին հարցեր, Տնտեսական, զինուորական, եւ այլն, որոնք իրենց առջեւ եկող հարցերու տնօրինումները ստանձնած են: Ուրեմն, արտաքին հարցերու յանձնախումբին առջեւ դրուած էր, Յունուարէն սկսեալ, համառաջարկով գոնկրէսական Ատամ Շիֆի, 106րդ բանաձեւը, որ կը վերաբերէր Հայոց Յեղասպանութեան ճանաչումին: Թէեւ ճանաչման այս հարցը ասկէ առաջ, նախագահ Ռեկանի օրով ներկայացուած էր Գոնկրէս, սակայն չէր որդեգրուած կառավարութեան կողմէ: Այս անգամ եւս, ճանաչման գործողութիւնը տակաւին իր առաջին քայլը պիտի առնէր Յանձնախումբին կողմէ որդեգրուելով, 27 թեր եւ 21 դէմ ձայներով: Ուրեմն, պատահածը երկար եւ յոգնեցուցիչ ճամբու առաջին քայլն է, եւ սակայն, ինչպէս Մաս Յէ Թոնկ կ'ըսէր, «հազար քիլոմետր ճամբան, առաջին քայլով կը սկսի»:

ՃԱՆԱԶՄԱՆ ՈՐԻՍԱԿԱՆԸ

Տարիներու տքնաջան աշխատանք կատարուած է այս գծով, որուն «credit»ը, եթէ հայկական քաղաքական գործի լծուած հայ դատի տարբեր յանձնախումբերուն եւ ամերիկեան շրջանակներու մօտ կատարուող քաղաքական աշխատանքներուն կարելի է վերագրել, սակայն անմասն չէ գտնուած ամե-

րիկահայ համայնքը, որ երթալով, իր քաղաքականացումը զարգացնելու եւ օգտագործելու լուրջ աշխատանքին լծուած է: Հայկական «լուպին» ներկայիս աշխույժ վիճակի մէջ կը գտնուի, եւ այնքան ազդու, եւ այնքան գործունեայ, որ զարմանալիօրէն Ամերիկայի նախագահէն, իր արտաքին գործերու եւ պատերազմի նախարարներէն, Թուրք կառավարութեան գործաձած, եւ ազդու թուացող «չանթափ» (blackmail) յայտարարութիւններէն, մինչեւ Յանձնախումբի 21 դէմ քուէարկողները չկարողացան արգիլել 106րդ բանաձեւի վաւերացման գործողութիւնը: Նախագահ Պուշին հասցէին կարելի է ըսել որ իր նախնորական պայքարի շրջանին, հայկական յեղասպանութեան ճանաչումը խոստանալուն հակառակ, այս օրերուն հանդիսաւոր կոչ կ'ընէր բանաձեւի մերժումին համար, «Ամերիկայի Դաշնակից Թուրքը չնեղացնելու» մտահոգութեամբ: Արդարեւ, ոչ միայն Պուշ եւ իր կառավարութեան հեղինակաւոր անձերը, Ռայս, Կէյթս, ուրիշներ, դէմ արտայայտուեցան 106րդ բանաձեւի որդեգրման, այլ անոր վաւերացումէն ետք, «Fox», «CNN», «ABC» եւ թէլեվիզիոնի տարբեր կայաններ իբրեւ թէ հասկացող խօսնակները, քիչ բացառութեամբ, դէմ կը խօսէին 106 բանաձեւին, այն առարկութեամբ որ Ամերիկայի իրաքեան, աֆղանիստանեան, եւ ներքին դժուարին պայմաններու տակ, հայերու յեղասպանութեան ճանաչումը խիստ անյարմար պարագայ մը կը հանդիսանայ: 27 թեր քուէարկողներու հասցէին ալ, նոյնիսկ անպատկառ եւ քննադատական արտայայտութիւններ կատարուեցան:

ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՐՑԸ
Մարդիկ, մանաւանդ կառավարութիւններ, յատկապէս Թուրք

պետութիւնը եւ ժողովուրդը, պէտք է հասկնան, եւ ըստ երեւոյթին լաւ կը հասկնան, որ 106 բանաձեւը, թէեւ կը վերաբերի հայկական յեղասպանութեան ճանաչումին, խորքին մէջ սակայն, Ամերիկայի ներքին քաղաքական հարցն է, ճիշտ այնպէս ինչպէս որ է հրէական «հօլոքոստ»ը, Ռուսաստանի, Գամպոտիայի, եւ այս օրերու Տարֆուրի հարցերը: Այնպէս որ տանամանակներու վրայ քննուած, ապա ընդունուած, եւ ապա մերժուած քաղաքական խնդիր մըն է, որ այս պարագային, կը վերաբերի հայերուն: Իբրեւ պետութիւն, 1915էն սկսեալ, Ամերիկան լաւատեղեակ է հայերու ենթարկուած ճակատագրին, նոյնինքն Հենրի Մորկըթաուերու, Քեյթ Մորկըթաուերու եւ նախագահ Ուիլսոնի վկայութիւններով: Հիմնականին մէջ, հայերու յեղասպանութեան հարցը չի վերաբերի թուրքերուն, հայերուն կամ Ամերիկային, այլ համամարդկային հարց մըն է, որ կ'իյնայ արդարութեան, ճշմարտութեան եւ մարդկային իրաւունքներու շրջագիծէն ներս, եւ եթէ Գոնկրէսի 27 անդամները թեր քուէարկեցին 106 բանաձեւին, անոնց մտահոգութիւնը շատ աւելի հեռուն կ'երթար քան թուրք-ամերիկեան, կամ թուրք-հայկական փոխ-յարաբերութիւնները: Ուրեմն, հակառակ ամերիկեան ներկայ քաղաքական վիճակի անփառունակ վիճակին, հակառակ Գոնկրէսի եւ հանրային կարծիքի երկփեղկուած վիճակին, ամերիկեան խիղճը, քաղաքական իրապաշտութիւնը, այո, ճշմարտութեան, արդարութեան, մարդկային իրաւունքներու հետապնդման սկզբունքները զերակշիռ հանգամանք ստացան եւ հակառակ պուշերու, ռայսերու, կէյթսերու, հակառակ թրքական «պլըֆ»ներու, 27


Մար. Էջ 6

**ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ
ԵՐԳԵՐՈՒ ԵՐԵԿՈՅ**

Նուիրուած՝
Ս. Դ. ՀՆՁԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

120 Ամեակին

Կազմակերպութեամբ՝
ՓԱՐԱՄԱԶ ՄԱՍՆԱԾԻՒՂԻ



Երեկոյն պիտի խանդավառէ՝
Լոյստոնէն ժամանած սիրուած երգիչ՝ **ՍԱՄՈՒԷԼ ՎԱՐԴԱՆԵԱՆ**

Եւ Լոս Անճելոսէն **ՀՐԱԶ ՊՕՂԱՐԵԱՆ** իր նուագախումբով

Շարաթ 20 Հոկտեմբեր 2007, երեկոյեան ժամը 8:30-ին
Հ.Մ.Մ.-ի «Կարօ Սողանալեան» սրահին մէջ - 1060 N. Allen Ave., Pasadena

Տեղերը ապահովելու համար հեռաձայնել հետեւեալ թիւերուն
(213) 624-6451 - Մանուկ ԿԱՄ (626) 429-8366 - Ծովիկ

Մուտքի նուէր՝ \$40

ԱԶԳԱՅԻՆ

ԼԵՒՈՆ ՏԵՐ ՊԵՏՐՈՍԵԱՆԻ ՆԱԽԱԳԱՐԱԿԱՆ ԹԵԿՆԱԾՈՒԹԻՒՆԸ ՈՂՋՈՒՆԵԼԻ Է

ՀԱՅԿԱՆԱԳԱՇԵԱՆ

Սովիէթ Միութեան քայքայուածին յաջորդող անկախ Հայաստանի առաջին նախագահ Լ. Տէր Պետրոսեան, տասնեակ մը տարիներու լուռութենէ յետոյ, դարձեալ քաղաքական հրապարակի վրայ է: Աւելի քան տասնամեակ մը իշխանութենէն հեռու մնալէ յետոյ, շրջող տարածաշրջանները եթէ իր կողմէ իսկ չեն քաջալերուիր, ժողովրդային ցանկութեան մը արդիւնքն են, ինչ որ աւելի կ'արժեւորէ զանոնք: Անցեալ պաշտօնակազմի կամ կարօտախտի արտայայտութիւնն է այդ ցանկութիւնը, քանի որ, ժողովուրդը աւելի բարեկեցիկ պայմաններու տակ էր ապրեր այդ ժամանակ, սակայն, անկախութիւն ձեռք ձգած ըլլալու երջանկութիւնը շատ բաներու պակասը կը լրացնէ: Ի վերջոյ, նոյն հայ ժողովուրդին առած ի կարգ անցած խօսքն է «ոչ միայն հացիւ, այլև բանիւ»-ը եւ Լ. Տէր Պետրոսեան անձնապէս այդ բնաբանը խորհրդանշող մտաւորական մըն է:

Ղարաբաղի գալիք ժամանակներու մասին անոր հեռատես եւ գգուշաւոր արտայայտութիւնները նենգամտօրէն շարաշահող խմբակը չփախցուց այդ առթիւ ժողովուրդի մէկ մասին մէջ յառաջացած դժգոհութիւնը՝ համակարգուած քարոզչութեամբ անոր հրաժարումը պահանջելով: Այս շարժման պարագլուխը կը թուէր ըլլալ արդի հայ բանակի կերտիչ եւ վարչապետ Վազգէն Սարգսեանը, որուն հայրենասիրական մաքուր ձգտումներուն մասին կարելի է կասկածիլ, սակայն դժբախտաբար, ոչ իրեն պէս հայրենասէր՝ այլ դաւադիր տարրերու ակամայ գործակատարը եղաւ: Արդարեւ, ի՛ր ալ մեղսակցութեամբ անկախութեան կերտիչն պահանջուեցաւ հրաժարիլ, եւ ան, կազմակերպուած պետական հարուածին պարտադրաբար ենթարկուելով քաշուեցաւ իրեն յատկացուած ապարանքը՝ նախագահի աթոռին վրայ բազմած Ռ. Քոչարեանէն իր արժանապակել ապրուստին եւ ապահովութեան մասին երաշխիք ստանալէ յետոյ:

Վ. Սարգսեան շուտով անդրադառնալով մուսուլման մտաւորական մթնոլորտին՝ խորհուրդին ու գործակցութեանը դիմեց խորհրդային շրջանի Հայաստանի ղեկավար

կարէն Դեմիրճեանին, որ այդ միջոցին քաղաքականութենէ քաշուած՝ մեքենական ճարտարարուեստի ձեռնարկ մը կը կառավարէր: Իմաստուն քայլ մըն էր, որ սակայն ողբերգութեամբ վերջացաւ: Այս գործակցութեամբ աւելի զօրացած հայրենի իշխանութիւնը գլխատուեցաւ խորհրդարանին մէջ իրագործուած ազգադաւ սպանդով, մինչ Ռ. Քոչարեան նախագահ էր, իսկ Սերժ Սարգսեան՝ ներքին գործոց եւ ապահովութեան նախարար...:

Ատկէ ի վեր իշխող այս երկեակը հայրենադաւ այդ սպանդին դատական հետապնդումներուն նպատակադրմար ընթացք տալով փորձեցին քողարկել անոր ետին գտնուող իսկական պատասխանատուները, մինչ ոճիրը գործադրած Յունանեան եւ վոհմակը բանտէն ի գուր սպառնացին իրականութիւնը դուրս տալ՝ փոխարէնը ստանալով «բանտի» մէջ ապրելու ապահով եւ հանգստաւէտ կեանք: Խորհրդասքօղ այս ոճիրին իսկական կազմակերպիչները պաշտօնապէս դեռ չեն բացայայտած, սակայն, ոչ ոք կրնայ պնդել թէ իշխող զոյգին ձեռքերն ու խիղճը մաքուր են:

Չորսամեայ երկու շրջան աւարտելէ յետոյ, նախագահ Քոչարեան, ըստ սահմանադրութեան, երրորդ շրջանի մը թեկնածու ըլլալու իրաւունք չունենալով, նախագահի ընտրութիւն պիտի կատարուի 2008ի Փետրուարին: Նախագահական թեկնածուներու շարքին, վարչապետ Անդրանիկ Սարգսեանի մահէն յետոյ վարչապետութիւնն ալ ստանձնած Սերժ Սարգսեան իր բազմատարած իշխանութեամբ կը յաւակնի նախագահական աթոռն ալ գրաւել: Բաց կը թուի թէ ժողովրդային բոլոր իսակները այդպէս չեն մտածեր: Այս երկեակին մականին տակ ապրած ժողովուրդը ըստ բաւականին յագեցած կը թուի անոնց «հոգածութենէն» բարի երթ մաղթելով անոնց: Եւ իսկապէս աւելի նպատակադրմար է որ այս երկու ականաւոր դարաբաղցիները երթան ծառայել իրենց ծննդավայրին, որուն ապագային շուրջ մութ ամպեր կուտակուած են:

Գալով Լեւոն Տէր Պետրոսեանի այս գուռայ եւ սակաւախօս մարդը որքան լուռ էր մնացեր իր մասին եղած շուրջներուն, գինք

կրկին անգամ նախագահական աթոռին վրայ տեսնելու ժողովրդային ցանկութիւնը աւելի մեծ թափ կը ստանայ: Ակադեմական բարձր պատրաստութեամբ եւ իսկական մտաւորականի արժանիքներով օժտուած Լ. Տէր Պետրոսեան լաւագոյն թեկնածուն է նախագահութեան, չմոռնալով նոյնիսկ այն սխալները որոնք գործեց ան՝ անփորձութեան պատճառով, բարեմտաբար եւ ազգասիրական նպատակներով, ինչպէս՝ Ղարաբաղի այդ օրերու նախագահ Ռ. Քոչարեանը հրաւիրելով որ ստանձնէ Հայաստանի վարչապետութիւնը, այս արարքով աշխարհին ցոյց տալու համար որ նոյն հայ ժողովուրդն է որ կ'ապրի կիսուած իր հայրենիքին մէջ: Ան իր արարքին մէջ չէ որ սխալեցաւ, որ ինքնին ժխտումն էր մեր հայրենիքը բաժան-բաժան ընելու փորձերուն, այլ ողբալիօրէն սխալեցաւ իր բարերարեալին նկարագիրը ճանչնալու մէջ, ինչ որ յանգեցաւ իր պաշտօնակցութեան: Աւելի փոքր տարողութեամբ սխալներ ալ ստուեր ձգեցին իր վրայ, ինչպէս «կուսակցութիւնները անախորհիկ են» (ժամանակավրէյ) յայտարարութիւնը եւ ընդհանրապէս Սփիւռքը ստորագնահատելու հակումը եւ այլն, որոնք իր համակիրներն իսկ դժգոհ ձգեցին, սակայն վստահ ենք որ առողջ դատողութեան տէր եւ իրատես այս մարդը հարկ եղած դասը քաղած պէտք է ըլլար իր փորձառութենէն: Ան պէտք է տեսած ըլլայ որ Սփիւռքը ունէր եւ տակաւին ունի իր դասական երեք կուսակցութիւնները, մինչ Հայաստանի մէջ տունկի պրագութեամբ բուսան բազմաբղէտ «կուսակցութիւններ», որոնք մեծ մասամբ գաղափարաբանութենէ զուրկ՝ անհատի մը կամ անհատներու ծառայող խմբակներ են:

Ուրախալի էր որ Լ. Տէր Պետրոսեան վերջերս իր երկարատեւ լուռութիւնը խզելով հրամայական նկատեց հայրենի պետական իշխանութիւնը բարեփոխելու անհրաժեշտութիւնը՝ այդ նպատակին ձգտող բոլոր ուժերուն աջակցելու իր պատրաստակամութիւնը յայտնելով:

Այս մտածումներով եւ ակնկալութիւններով ալ ողջունելի կը գտնենք Լեւոն Տէր Պետրոսեանի նախագահի պաշտօնին թեկնածուութիւնը:

ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԾԱՆԱԶՈՒՄ

Ծարուհակուած էջ 5-էն

անդամներ արտաքին յարաբերութեանց յանձնախումբին, անսացին իրենց խղճերու ձայնին, քաղաքական իրապաշտութեան եւ իրենց քուէները տուին ի նպաստ 106 բանաձեւին: Պէտք է նաեւ յատկապէս նշել որ 27-ի մէջ, հաւասար չափով հանրապետականներ եւ տեմոքրատներ կային, որ ցոյց կու տայ թէ կուսակցական պատկանելիութեան հարց չկար, այլ քաղաքական մտածողութեան: Պէտք է յուսալ որ ամերիկեան ղեկավար շրջանակներու մէջ կան մարդիկ որոնք չեն ազդուիր թրքական «պլըֆ»ներէն՝ ինձիրլիքի օղակայանի օգտագործման, թուրք-քիւրտ ընդհարումներու կարելիութեան, տնտեսական սեղմումներու եւ կամ այլ ձեւի «թշնամական» արտայայտութիւններու գծով:

Թուրքը անշուշտ թէ օգտուողն է ամերիկեան գործակցութենէն: Թուրքը, եթէ կ'ուզէ վաղը մտնել Եւրոպական Միութիւն եւ սկսի դասուել քաղաքակիրթ ազգերու շարքին, լաւ կ'ըլլայ որ նուազ աղմուկ հանէ 106ի դէմ, որ խորքին մէջ, ուղղուած է օսմանեան պատմութեան անցած պետութեան դէմ: Առաւել, 106-ը, առայժմ միայն բարոյական փոքր յաղթանակ մըն է, ոչ-պարտաւորեցնող ամերիկեան կառավարութեան համար, ինչպէս անցեալին եղած են նման բանաձեւեր: Թուրքը սակայն գիտէ թէ ցեղասպանութեան ճանաչման այս հանգրուանը, որ տակաւին պէտք է անցնի Գոնկլէսի ամբողջական կազմին, առաջին քայլն է հայ ժողովուրդի պահանջատիրութեան: Անոր անպայմանօրէն պիտի հետեւին հողերու վերադարձի եւ նիւթական հատուցման հարցերը, որոնք տակաւին կը մնան սահմանելի եւ ճշդելի:

106 բանաձեւի յաջողութիւնը մեզ, բոլոր հայերուս, բոլոր հայ դատի յանձնախումբերը, ամերիկեան քաղաքական մեր բարեկամները, ճշմարտութեան եւ արդարութեան հետամուտ տէրութիւններն ու անհատները, կը պարտաւորեցնէ առաւել լարելու մեր աշխատանքները, առանց յոգնելու, առանց վհատելու, մանաւանդ առանց ժամանակ վատնելու ոչ հիմնական հարցերու շուրջ, ձեռք ձգելու հանգրուանային յաղթանակներ, մեծ պատերազմին նպաստող:

ATLANTIS
RESTAURANT AND NIGHT CLUB

FRIDAY NIGHTS AT ATLANTIS
ARABIAN NIGHTS

ENJOY A NIGHT OF MIDDLE EASTERN MUSIC, DANCING AND ENTERTAINMENT EVERY FRIDAY NIGHT AT ATLANTIS. ATLANTIS IS FULLY EQUIPPED WITH A REMARKABLE COCKTAIL BAR, HOOKAH BAR AND LIVE DJ.

EVERY FRIDAY, BE SURE TO WITNESS OUR LIVE BELLY DANCING SHOW FEATURING WORLD FAMOUS JELINA AND THE SAHALAH DANCERS

- authentic cuisine
- full hookah bar
- VIP membership
- full cocktail bar
- live belly dancing
- live music and DJ

ATLANTIS
RESTAURANT AND NIGHT CLUB

626.449.4599
162 N. SIERRA MADRE BLVD.
PASADENA, CA 91107

ՀՈՎԻՏԱԿԱՆ ԱՅՑ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԲԱՑՄԱՆ ԱՂՕԹՔԸ ԱՐՏԱՍԱՆԵՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐՈՒ ՏԱՆ ԺՈՂՈՎԻՆ

Չորեքշաբթի Հոկտեմբեր 10, 2007, առաւօտեան ժամը 9:00-ին՝ Ամենայն Հայոց Հայրապետը այցելեց Capitol Hill, ուր պիտի գումարուէր Ամերիկայի Ներկայացուցիչներու Տան ժողովը: Ներկայացուցիչներու Տան Խօսնակ Տիկ. Նէնսի Փէլոսի հրաւիրեց Նորին Սրբութիւնը՝ որպէս զի ժողովի բացման աղօթքը ըսէ: Վեհափառ Տէրը հետեւեալ աղօթքը արտասանեց.

«Ով Տէր, գոհութիւն կը մատուցանենք Քեզի որ այսօր շնորհքը պարգեւեցիր մեզի աղօթելու այս ազգի ղեկավարներուն համար, որոնք կը տքնին ազատութեան եւ արդարութեան ընդհանրական դատին ի նպաստ: Աճեցուր անոնց իմաստութիւնը եւ վճռակամութիւնը: Անոնց գործունէութիւնները կը ներշնչեն եւ կը գոհացնեն արդարութեան ձգտումը, որ կաջ բոլորին սրտին մէջ: Հայր մեր որ յերկինս, առաջ-

թեան, որուն հետեւանքները կը զգացուին ամբողջ աշխարհի մէջ ցեղասպանութեան նոր յայտնութիւններով: Հոգիի խաղաղութիւն շնորհէ մարդկութեան դէմ գործուած ոճիրներու բոլոր զոհերուն եւ խաղաղութիւն եւ արդարութիւն շնորհէ անոնց ժառանգորդներուն: Կասեցուր կեանք, ազատութիւն եւ երջանկութիւն ոսնակոխ ընողները:

Ով Տէր, օրհնէ այս երկիրը եւ անոր ժողովուրդը, խաղաղութիւն եւ ապահովութիւն պարգեւէ Ամերիկայի ուստրերուն եւ դուստրերուն՝ որոնք իրենց ազգին կը ծառայեն արտերկրի մէջ: Թող Միացեալ Նահանգները շարունակէ իր առաքելութիւնը՝ որպէս յոյսի մեծ փարոս. Ամէն»:

(Ամերիկայի Ներկայացուցիչներու Տան բացման արարողութիւնն ու Ամենայն Հայոց Կաթողի-



Ամենայն Հայոց Հայրապետը ձեֆֆըրալնի Յուշահամալիրի մուտքին միջեկեղեցական եւ միջ-կրօնական դեկավարներու հետ



Ամենայն Հայոց Հայրապետը Հայկական Յեղասպանութեան Թանգարանին մէջ

նորդ հանդիսացիր բոլոր ազգերուն, ներառեալ Հայաստանի Հանրապետութեան – մեր հայրենիքին եւ մեր հաւատքի կեդրոնին – Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին:

Պատմութեան տխուր դէպքերու ծանրութեան ներքեւ՝ մենք կը լիշենք գոհերը Հայոց Յեղասպանու-

կոսի արտասանած աղօթքը քանիցս պատկերասրահուեցաւ ամերիկեան հեռուստացոյցի կայաններէն: – Ի դէպ, նոյն երեկոյեան Ներկայացուցիչներու Տան Արտաքին Յարաբերութեանց Յանձնաժողովը 27 թեր եւ 21 դէմ քուէներով ընդունեցաւ Հայոց Յեղասպանութիւնը ճանչցող բանա-

ձեւը: Նորին Սրբութեան աղօթքէն ետք՝ Ներկայացուցիչներու Տան երէցը Տանիէլ Գուլլին՝ Անոր ներկայացուց վկայագիր մը՝ ի յիշատակ իր մատուցած աղօթքին՝ քոնկրէսականներու ժողովէն առաջ:

Աղօթքի մատուցումէն ետք՝ Խօսնակ Նէնսի Փէլոսի Ամենայն Հայոց Կաթողիկոսին, Առաջնորդ Սրբազան Հօր ու Թեմական Պատուիրակ Գերշ. Տ. Վիգէն Արք. Այգազեանին ցոյց տուաւ ժողովարարի զանազան բաժիններ եւ զանոնք առաջնորդեց իր գրասենեակը, ուր Նորին Սրբութիւնը խօսեցաւ Եկեղեցոյ կարեւորութեան, Հայաստանի Հանրապետութեան եւ Միացեալ Նահագաց մասին:

Ամենայն Հայոց Հայրապետը շնորհակալութիւն յայտնեց Տիկին Փէլոսիին եւ անոր միջոցաւ Ներկայացուցիչներու Տան բոլոր անդամներուն՝ իրենց ցուցաբերած զօրակցութեան համար, եւ որպէս յիշատակ անոր նուիրեց փոքր խաչքար մը:

Դիւանագիրտական ընդունելութիւն Հայկական Դեսպանատան մէջ Կէսօրուան ժամը 12:00-ին՝ հիւրընկալութեամբ Հայաստանի Հանրապետութեան Միացեալ Նահանգաց արտակարգ եւ լիազօր Դեսպան

Տիար Թաթուլ Մարգարեանի՝ ի պատիւ Ամենայն Հայոց Հայրապետին Հայկական Դեսպանատան մէջ ընդունելութիւն մը տեղի ունեցաւ՝ մասնակցութեամբ օտարազգի մեծ թիւով դիւանագէտներու:

ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ՝ ՈՂՋԱԿԻԶՄԱՆ ԵՒ ՅԵՂԱՍՊԱՐԴՆԵՐՈՒ ԵՒ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐՈՒՆ

Յետ միջօրէի ժամը 2:00-ին՝ Ամենայն Հայոց Հայրապետը իր շքախումբով նախ այցելեց Ողջակիցման Թանգարանը եւ ապա՝ Հայկական Յեղասպանութեան Թանգարանը, ուր կատարեց սնօրհնէքի արարողութիւն:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՊԱՏԱՆԻՆԵՐՈՒ ԵՒ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐՈՒ ՀԵՏ

Երեկոյեան ժամը 7:00-ին՝ Ուաշինկթըն Տի. Սի.ի Ս. Աստուածածին Եկեղեցոյ մէջ կատարուեցաւ Երեկոյեան ժամերգութիւն՝ հանդիսապետութեամբ Ամենայն Հայոց Հայրապետին, եւ մասնակցութեամբ հոգեւոր հայրերու: Ներկայ էին Շնորհալի Դպրոցի աշակերտները, Երիտասարդաց Կազմակերպութեան մասնաճիւղի անդամները եւ գոյէճական ուսանողներ: Արարողութեան աւարտար. Եջ

Հայրենիքի եւ Ժողովուրդի Ծառայութեան Մէջ՝



120-Ամեակ

Ս.Դ.Հ.Կ.-ի 120-Ամեակի Առիթով Մեծարանքի Հանդիսութիւն Ի Պատիւ Վաստակատր Ընկերներու

Կազմակերպութեամբ՝
Ս.Դ.Հնչակեան Կուսակցութեան Արեւմտեան Ամերիկայի Վարիչ Մարմին

Ուրբաթ 26 Հոկտեմբեր 2007, Երեկոյան ժամը 8:00-ին Հ.Մ.Մ.-ի «Կարօ Սողանալեան» Սրահ 1060 N. Allen Avenue, Pasadena California

Մուտքը Հրաւերով

ԱՄԵՆԱՅՆ ԸԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵՎԻՆ Բ.

Շարունակում է 7-էն

տին՝ Եկեղեցու սրահին մէջ տեղի ունեցաւ ընդունելութիւն, որուն ընթացքին բարի գալստեան խօսքեր ուղղուեցան Նորին Սրբութեան եւ երջիթ ունեցաւ Նարեկի Զանգակներու Համոյթը՝ ղեկավարութեան Լէոն Հիմա-էյնաճեանի: Վեհափառ Հայրապետը իր գնահատանքը յայտնեց եւ օրհնեց բոլորը:

ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ՝ ԱՐԼԻՆԿԹՐՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆ

Ամենայն Հայոց Հայրապետ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Հինգշաբթի Հոկտեմբեր 11 առաւօտեան ժամը 10:30-ին այցելեց Արլինկըթընի Ազգային Գերեզմանատունը եւ աղօթեց ու ծաղկեպսակ գետեղեց Անժանթ Զինուորի Շիրմին: Պաշտօնական այս կարճ սակայն շատ տպաւորիչ արարողութեան էնտք՝ ներկաները ուղղուեցան դէպի ձէֆֆըրսընի յուշահամալիրը:

ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ՝ ԺԵՖՖԸՐՍԸՆԻ ՅՈՒՇԱՀԱՄԱԼԻՐԻՆ

Նոյն առաւօտուն, ժամը 11:30-ին, Ամենայն Հայոց Հայրապետը այցելեց ձէֆֆըրսընի Յուշահամալիրը, ուր հաւաք տեղի ունեցաւ միջ-եկեղեցական եւ միջ-կրօնական ղեկավարներու մասնակցութեամբ «Կրօնքի Ազատութիւն» նիւթին շուրջ: Ներկաները Յուշահամալիրին բաժինները այցելելէ ետք, համալիրի մուտքին ելոյթ ունեցան:

Հաւաքի բացման աղօթքը արտասանեց Գերշ. Տ. Խաժակ Արք. Պարսամեան, եւ ողջունեց ներկայ յարգարժան պատուիրակութիւնը եւ կոչ ըրաւ համագործակցութեան, հանդուրժողութեան, սիրոյ եւ հասկացողութեան՝ բոլոր ազգերու ժողովուրդներուն միջեւ:

Հետզհետէ խօսք ստին՝ Եպիսկոպոսական Եկեղեցու Կառավարական Յարաբերութեան վարիչ Մօրին Շէա, Միջ-կրօնական Կազմակերպութեան Տոքթ. Ուելտըն Կէտտի, Խղճմտանքի Կոչ Հիմնարկէն Բաբբի Արթըր Շնայըր, Հնդիկ Սիխ Խորհուրդէն Տոքթ. Բաժուան Սինդ, Հիւսիսային Ամերիկայի Իսլամական Ընկերութեան Տոքթ. Տայիտ Սիխ, Ուաշինկթընի Հոռմէական Կաթոլիկ Արքեպիսկոպոսարանէն Մարթըն Եպս. Հալի, Կրօնական Կեդրոնէն Բաբբի Տէյվիտ Սաբերսթայն եւ Ամերիկայի

Ուղղափառ Եկեղեցիէն Տ. Լէօնիա Քիշթովսքի:

Morgenthau hesitated and said, "She has not been enthusiastic about living here. Some of our friends tried to discourage me from accepting this post saying that Turkey would be pushed out of Europe and back into Asia. They said we would be attending Turkey's funeral."

"That's what I like about you, Mr. Morgenthau. You are honest. We will turn that funeral into a celebration!" Talaat laughed loudly and banged his fist down again. "And; you Mr. American Ambassador are helping us bring this corpse back to life." His rollicking laugh lasted almost a full minute.

Talaat was a complicated man of great contrasts. He had grown up in a poor family who ate meals without utensils, but the politician Talaat could display a formality equal to the most cultured of diplomats when it pleased him.

"You, Mr. American Ambassador, have been so optimistic toward our reconstruction," he continued, "And I am very appreciative. I want you to join our Turkish cabinet."

"You can't be serious."

"Of course I am," Talaat replied in his affable manner. "You should be our Minister of Agriculture."

"But I'm an American citizen!"

"We will not object to you keeping your American Citizenship and you can still be the American Ambassador. You will be known as Morgenthau Pasha!"

Morgenthau was bewildered by the offer. Was this a sign of Talaat's inexperience and his misunderstanding of a leader's use of power?

Talaat had little formal schooling and had risen to power through his extraordinary native ability. He had great force, a lively sense of humor, managed men well and had a superhuman ability to see into their motives.

And he also had a dark harsh side.

Kay Mouradian is the author of A GIFT IN THE SUNLIGHT: An Armenian Story

**Հայ Թելեժամբ Կը Վերադառնայ 18ը Ալիք Վրայ
Ոչ թէ մէկ, ոչ թէ 2, ոչ թէ 3 Ժամ այլ Օրուան 24 Ժամերը**

**Շարաքը 7 օր անվճար
Հարկ չկայ բաժանորդագրուելու - 40 Յանելեալ ալիքներ**

**Յանելեալ տեղեկութիւններու համար դիմել
Հայկական Թելեժամ (818) 982-2400**


**The Armenian Teletime Is Back On Channel 18
Not 1 Hour, Not 2 Hours, Not 3 Hours But 24 Hours Per Day
7 Days Per Week, Free**

No Subscription Fee - Plus 40 Additional Channels

For info call The Armenian Channel (818) 982-2400

ԶՄԻՒՆԻՈՅ (ԻԶՄԻՐ) ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ 1922 Թ. (85 ԱՄԵԱՅ ՏԱՐԵԼԻՑԻ ԱՌԻՊՈՎ)

ՓՐՈՖ. Ա.ԻԵՏԻՍ ՓԱՓԱԶԵԱՆ



Նախքան բուն նիւթին անցնելը, նպատակադրմամբ գտանք հետեւեալ համառօտակի պատմական տեղեկութիւնը տալ Չմիւռնիոյ հայութեան մասին:

Իզմիր քաղաքը գտնուում է Թուրքիայում, Եգէեան ծովի ափին:

Չմիւռնիայում բաւականաչափ թուով հայեր ապրել են դեռևս բիւզանդական կայսրութեան ժամանակաշրջանում: Այնուհանդերձ, հայ համայնքը ստուարացել է 17-րդ դարում տեղի ունեցած Թուրք-պարսկական երկարատե պատերազմների, ինչպէս նաև օսմանեան կայսրութիւնում բռնկուած ճելալիական աւազակախումբերի ապստամբութիւնների հետեւանքով: Այս բոլորը ծանր կացութիւն էին առաջացրել պատմական Հայաստանում բնակուող հայութեան համար: Սովն ու բռնութիւնները ստիպել էին հայութեան մի մասին տեղափոխուել կայսրութեան տարբեր շրջանները, այդ թուում եւ Չմիւռնիա:

Հարկ է նշել, որ միջնադարի հայ եւ Թուրք պատմագիտները հաւաստի փաստերով հաստատում են հայ ժողովրդի կրած ծանր տառապանքները այդ պատերազմների ընթացքում: Օրինակ 17-րդ դարի Թուրք պատմագիր՝ Իբրահիմ Փեչեւեհի իր «Պատմութեան» (Թարիհ-ի Փեչեւեհ) մէջ «Երեանի, Ղարաբաղի եւ Նախիջևանի կողոպտան ու թալանը» խորագիրը կրող գլխում մանրամասնութեամբ նկարագրել է Թրքական բանակի կատարած բարբարոսութիւնները, ձեռք բերուած հսկայական աւարն ու կողոպտւած, ինչպէս նաև զեղանի աղջիկները եւ տղաները գերեվարուածը սուլթանական բանակի համար:

Այսպէս՝ «օսման ցիւները սկսեցին կողոպտել եւ թալանել Երեւան քաղաքն ու երկիրը: Այնտեղի բոլոր ոսկեզօծ եւ զեղեցիկ կառուցուած պալատներն աւերեցին եւ գետնին հաւասարուեցին: Գեղազարդ եւ ոսկեփայլ կամարներն ու ծածկերը խորտակուեցին, եւ 20 հազարից աւելի կանանց ու երեխաների գերի տարան: Դրանից յետոյ իսլամական բանակը, մեծ աւարով ուրախ տրամադրութեամբ կայսերական բանակատեղի հասաւ» (Տե՛ս Աւետիս Փափազեան) Թուրքական վաւերագրերը Հայաստանի եւ հայերի մասին, 16-19-րդ դարեր, Երեւան, 1999, էջ 14, 55):

Այս աչպիսի դաժան վերաբերմունքի պատճառներն էին, որ հայութիւնը սկսեց իր բնօրրանից ցրուել կայսրութեան տարբեր շրջանները: Հակառակ այս բոլորին Չմիւռնիայում բազմացող հայութիւնը յետագայ դարերի ընթացքում սկսեց հիմնել եւ կառուցել եկեղեցիներ, դպրոցներ, սպարաններ: 19-րդ դարում սկսուեցին հրատարակուել հայերէն ամսագիր եւ թերթեր: Գործել են նաև մշակութային բազմաթիւ կազմակերպութիւններ, ընկերութիւններ, թատրոն:

Յաւաք այդ բոլորը ոչնչացան եւ հրկիզուեցին Առաջին Համաշխարհային պատերազմի վերջերին տեղի ունեցած յոյն-թրքական պատերազմի հետեւանքով:

Այսպէս, Առաջին Համաշխարհային պատերազմի աւարտից յետոյ, դաշնակից պետութիւնները նախաձեռնեցին Օսմանեան կայս-

րութեան բաժանման քաղաքականութեան իրագործմանը, որը նպատելու էր Թրքական լծի տակ հեծող ժողովուրդների այդ թուում հայերի, յոյների, արաբների եւ միւսների ազատագրմանն ու նրանց ինքնուրոյն պետութիւնների ստեղծմանը: 1919 թուին սկսուեց յոյն-թրքական պատերազմը եւ Մայիսի 15ին յունական զօրքերը ազատագրեցին հին յունական Չմիւռնիա (Իզմիր) քաղաքը եւ այլ բիւզանդական կայսրութեան պատկանող քաղաքներ ու տարածքներ, աստիճանաբար հասնելով մինչեւ Անգարայի մատուցները:

Այնուհանդերձ յետագայում միջազգային նենգ քաղաքականութեան հետեւանքով սկսեցին նահանջել իրենց գրաւած տարածութիւններից:

Քեմալական զօրքերը 1922 թ. Սեպտեմբերի 9ին ներխուժեցին Չմիւռնիա ու Թուրք խուժանի հետ սկսեցին յոյն եւ հայ խաղաղ բնակչութեան կոտորածն ու ունեցուածքի թալանը:

Սեպտեմբերի 13ին քաղաքում բռնկուեց ահաւոր հրդեհ, որը քեմալականների ձեռքի գործն էր: Լայնածաւալ հրդեհի հետեւանքով այրուեցին մօտ 50 հազար տուն, 24 եկեղեցի, 28 դպրոց եւ այլ հասարակական կառուցներ: Կոտորածի ենթարկուեցին նաև Իզմիրի շրջակայ տարածքներում բնակուող հայերն ու յոյները, ինչպէս նաև ջրասույգ արեցին այն նաւերը, որոնց վրայ ապաստանել էին բազմաթիւ փրկուածներ:

Իզմիրի աղէտի մասին կան կոտորածից վերապրողների եւ տարբեր երկրների ականատես գործիչների վկայութիւնները, որոնք լոյս են տեսել տարբեր ժամանակներում: Դրանց մէջ իր ուրոյն տեղն ունի Նիւ Եորքի Գոլուովիայի համալսարանի դասախօս, պատմաբան Մարճըրի Յուսէփեանի փաստավաւերագրական գիրքը, որը լոյս է տեսել մի քանի անգամ անգլերէն լեզուով: (Տե՛ս M. Housepian, Smyrna 1922, The Distrution of a city, Kent (Ohio), 1988): Այս վերջինը թարգմանուել է նաև յունարէնի:

Այս գիրքը հաւաստի մի պատմագիտական ուսումնասիրութիւն է գրուած դէպքերի ականատես ու մասնակից հայերի, ամերիկացի դիւանագէտների եւ միսիոնարների յուշերի, նամակների ու վկայութիւնների հիման վրայ:

1911-1917 թթ. ինչպէս նաև 1919-1922 թթ. Իզմիրում ԱՄՆ-ի հիւպատոսն է եղել Ճորճ Հորտոնը:

Այնպէս որ նա ականատես եւ ականջալուր է եղել Իզմիրի ահաւոր աղէտին:

Ճորճ Հորտոնը 1922 թ. Սեպտեմբերի 27ին Չմիւռնիոյ հրդեհի եւ կոտորածների մասին ԱՄՆ-ի Արտաքին Գործեր Նախարարութեան յեղել է յատուկ զեկուցագիր: Այս զեկուցագրի հայերէն թարգմանութիւնը լոյս է տեսել նաև «Ս. Հայաստան» ամսագրի 1988 թ. թիւ 10 համարում, էջ 17, 20:

Ստորեւ բերում ենք մի հատուած այդ զեկուցագրից, որ կատարեալ պատկերացում է տալիս կոտորածի եւ քաղաքի աւերման մասին:

«... Թուրքերի գալուց անմիջապէս յետոյ զանգուածային կողոպտաներ կատարուեցին, աւազակութիւն ու կոտորած սկսուեց քաղաքում: Ո՛րք պայթեց յատկապէս հայ բնակչութեան գլխին, որը մեղադրուած էր ուսմբեր օգտագործելու մէջ: Կանոնաւոր բանակի զօրամասերը երեք օր շարունակ դաժան դատաստան էին տեսնում հայերի, հետ. նրանց հետապնդում էին ու սպանում, իսկ տները ենթարկում էին խուզարկութեան ու կողոպտուի: Ոչ մի պրոպագանդաչի կարող թաքցնել այն, ինչ իրականում տեղի էին ունեցել Չմիւռնիայում, արժանահաւատ շատ վկաներ կային այնտեղ, եւ վաղ թէ ուշ բոլորը կ'իմանան ճշմարտութիւնը:

Մեծ հրդեհից յետոյ ամբողջ քրիստոնեայ բնակչութիւնը բռնի կերպով քշուեց նաւանահափստ, որտեղ մնաց մի քանի օր: Քաղցից ու ծարաւից մեռնող մարդիկ ձեռքերը պարզում էին նաւահանգստում կանգնած ուղեւորների կողմը, օգնութիւն աղերսում: Թուրքերը նողկալի էին պահում իրենց: Միսս էմիրի Մակկայամը՝ Չմիւռնիայի իրական գիմնագիտի տնօրէնը, որ այսօր առաւօտեան է այնտեղից վերադարձել, պատմում է, որ նաւահանգստում եւ առափնիայում դեռևս երեւում են առանց ջրի եւ ուտելիքի տառապող այդ խղճալի մարդկանց բազմութիւնները: Նրանցից շատերը մեռնում են, իսկ քայքայուող դիակները զգուելի գարշահոտութիւն են արձակում: Իր օրհասին սպասող դեռևս 200 հազար մարդ կայ նաւահանգստում: Նրանց հաղորդել են, որ 18-ից 45 տարեկան բոլոր տղամարդիկ

պէտք է պահուեն որպէս ռազմագերի եւ ուղարկուեն երկրի խորքը: Նա տեսել է թուրք պահստողականներով ուղեկցուող տղամարդկանց մեծ խմբեր: Աշխարհն անզգայացել է Եւրոպայում տեղի ունեցող պատերազմից, բայց դեռևս կան մարդիկ՝ ընդունակ կարեկացանք զգալու այն դժբախտների նակտամբ, որոնց բռնութեամբ բաժանում են հայերից ու եղբայրներից, ազգականներից, սիրելիներից ու մերձակորներից: Իւրաքանչիւրը, ում վիճակուել է ապրել Արեւելքում, գիտէ, որ մահ է սպասում այդ մարդկանց: Համաշխարհային պատերազմի ժամանակ, երբ ես Չմիւռնիայում էի ապրում, յունաօսմանեան հպատակների բռնի կերպով դիրքեր փոխել եւ այլեւալ ծանր աշխատանքներ կատարել անձրեւի տակ առանց պաշտպանական հագուստի, առանց վրանների ու ուտելիքի, եւ իւրաքանչիւր չորսից երեքը մեռնում էր: Նրանց ընտանիքները բաժանուելու են, կանայք, քոյրերն ու երեխաները մնալու են անպաշտպան:

Ուզում եմ կրկնել. Աբդուլ Համիդի տապարալումից յետոյ Թուրքերի հետեւողականօրէն վրածա քաղաքականութիւնն արտայայտում է քրիստոնեայ ժողովուրդներին արտաքսելու եւ բնաջնջելու մէջ: Ես մի քանի յաջող կանխատեսումներ եմ արել եւ հիմա ուզում եմ մէկն էլ անել. եթէ քմեյականներին թոյլ տրուի Ստամբուլ մտնել, ապա այն ահաւոր տեսարանները, որոնց մենք ականատես ենք եղել Չմիւռնիայում, կը կրկնուեն նաև այդ քաղաքում:

Պատիւ ունեմ պետական դեպարտամենտին հաղորդելու նաև, որ զանգուածային բոլոր սպանութիւնները (Թրքական կայսրութեան պատմութիւնը հիմնականների պատմութիւն է) կատարուել են Թրքական բարձրագոյն իշխանութիւնների հրամանով: Ես նոյնպէս հաւատում եմ, որ եթէ Չմիւռնայի նաւահանգստում գտնուող դաշնակցային նաւատորմերը՝ ֆրանսիական, բրիտանական, իտալական ու ամերիկեան, վճռականօրէն հանդէս գային այդպիսի քաղաքականութեան դէմ, ապա այդ կոտորածը տեղի չէր ունենայ: Եթէ նրանք Մուսթաֆա Քեմալին ասեն, որ նա դադարեցնի 18-45 տարեկան տղամարդկանց երկրի խորքն ուղարկելը, ապա նա չի համարձակուի նրանց չլսել, բայց երբ նա տեսնում է, թէ ինչպէս մեծ ուժերն անտարբերօրէն են նայում իր ահաւոր գործողութիւններին, նա ոչ մի բանի առջև կանգ չի առնում: Եւրոպական մեծ ուժերի աչքի առաջ եւ, հաւանաբար, նրանց լռելեայն թոյլտուութեամբ կատարուող կոտորածն այնպիսի նէ, որի նմանը, յոյս ունեմ, որ այլեւս երբեք չեմ տեսնի:

Հաւատում եմ, որ երբ Չմիւռնայի եւ Մերձաւոր Արեւելքի իրադարձութիւնների վերաբերեալ ճշմարտութիւնը յայտնի դառնայ, Եւրոպայի եւ ԱՄՆ-ի բոլոր օրիաւոր մարդկանց զայրոյթը կ'առաջացնի...»:

ՊԱՏՄԱԿԱՆ

ՂԵՊԻ ԱՐՅԱՆ ԱՇԽԱՐԸ

ՊՕՂՈՍԼԱԳԻՍԵԱՆ

Ժամանակ Ջանգեղուր եւ զգնալ Արցախ աշխարհ, մեղանշանք պիտի լինէր իմ հայու սրտին: Հայոց աշխարհի հողից «բուսած» Մուսա Լեւոյի իմ նախնիների շառաւիղն եմ: Իմ սիրտն ու հոգին այդ հողի հորովեցնելի կանչելով են մկրտուած: Հողը մայր է, երգի համանուագ, ոգեղէն հուր, պաշտամունքի մեհեան, որի ոգին սրտի սարսուռ է առթնում: Արցախի կուրծքի մի նոր Մուսա Լեւոյի յողթական ճակատամարտ էր:

1986 թուական, բռնակցուած ազգերի միութիւնում նոր իշխող էր եկել, բացիստութիւն ու ժողովրդավարութիւն էր սկսել քարոզել: Աշխարհը նրանք քաջալերում էր, որ շուտ փչէր այդ երկիրը: Իսկ հայերը ծիծաղեցին այդ նոր մեծ գաղափարների վրայ: Իրենց փոքրացած հայրենի երկրում ազատ կամքի ու անկախ ապրելու ընդվզման գոչեցին, որի ղողանչները հասան բռնակցուած միւս ազգերին: Նա տանուլ տուեց: Փլուեց եօթնասուն ամեայ գարմացած, մարդկային հոգին եղծանած, մարդկանց այնքան ցաւ ու տառապանք պատճառած «չարի» կայսրութիւնը:

Յուլիս 22, 1918 թուական, Արցախի ժողովուրդը յայտարարել էր՝ Ազատ Ղարաբաղի ժողովրդական Կառավարութեան հռչակումը, որի վարած ներքին ու արտաքին քաղաքական գործունէութիւնը վաւերականացուած էր եղել Ղարաբաղի ժողովրդական ներկայացուցիչների ինն համագումարների հռչակագիրներով: Առաջին համագումարի առաջին նիստում Ղարաբաղի Ազգային ժողովը իրեն յայտարարած էր եղել Հայաստանի Արարատեան Հանրապետութեան անբաժանելի մասը: Այսու, Ղարաբաղը մաս կազմած չէր եղել նոյն թուականի Մայիսի 28ին Գանձակում հռչակուած Ատրպէյճանական հանրապետութեանը:

Սալոնիկեան կրիպտո-հրէական մասնական օթեակի (Թալեաթ, էնվէր, ձեմալ, Նագիմ, Ծէքեր, Շիւքրի եւ այլք) որը գործում էր «Իթթի-հատ վէ Թէրաթի» կուսակցութեան անուան տակ, եւ «Գոլուբոյ Դրակոն» պոլշեիկեան մասնական օթեակի (Դրոցկի, Ռադեկ, Կամենե, Ջինովե, Բուխարին, Բելլա Կուն, Բերիա, Մոլոտով, Լիտվինով եւ այլք) անխոնջ միջամտութեամբ էր շիրտանում ստեղծուել Ատրպէյճան անուանուած այդ պետութիւնը, որտեղ Պոլովցիների կողմից խաղաղական թագաւորութեան կործանումից յետոյ տեղափոխուած էր եղել Թուրք-յուդայական ամբողջ բնակչութիւնը: Հրէական պետութիւն ստեղծելու պահեստի տարբերակ էր լինելու այն, եթէ Բալֆուրի Դեկլարացիայի՝ Պաղեստինի սիոնացման մասին իրագործումը տապալուէր: Թողոր շէրցելի կողմից հրատարակուող Սիոնիզմի պատգամաբոս «Երիտասարդ Սիոն» թերթը աւետել էր, որ ստեղծուել է Ատրպէյճան անուանով հրէական պետութիւն: Ռուս Կիրովին Պաքուից վտարելուց յետոյ Ատրպէյճանը երկար ժամանակ կառավարել էին լեւնային հրեայ Նարիմանովը, Սալոնիկցի կրիպտո-հրեայի որդի Բաղիրովը, Դաւիթ Ջիֆոն-Վէզիրովը:

Պոլշեիկեան Ռուսաստանի եւ Թուրքիայի համաձայնութեամբ 1920 թուականի Ապրիլի 28ին հռչակուել էր Ատրպէյճանական Սոցիալիստա-

կան Հանրապետութիւնը՝ Կովկասի թաթարների համար պահպանելու 1918 թուականին ստեղծուած եւ Ատրպէյճան անուանուած արհեստածին պետութիւնը: Սովետական փաստաթղթում Ատրպէյճան կոչուած երկիրը յայտարարել էին ոչ թէ ազգային պետութիւն, այլ միայն վարչատնտեսական միաւոր: «Կովկասի թաթար» կոչուող գանգուածը, որին պոլշեիկները մկրտել էին ատրպէյճանցի, կազմել էր բնակչութեան մօտ քսան հինգ տոկոսը միայն, իսկ նոյն ատեն հայերի թուաքանակը այնտեղ երեսուն հինգ տոկոս: Հայերը շէներ, քաղաքներ կառուցեցին, Մանթաշովներ սեւ ոսկու հորեր շատրուանեցին, ճարտարարուեստ արարեցին, հիմա այնտեղ հայ չկայ, տեսաք ինչ եղաւ:

Ազգերի Լիգան, 1920 թուականի Դեկտեմբեր 18ի նիստի որոշումով հաստատուել էր Ղարաբաղի միացումը Հայաստանին եւ անդամ պետութիւններին ու Սովետական Ռուսաստանին հասցէագրուած յուշարգրելով պահանջել էր ճանաչել իր որոշումը: Երջապատի ժողովուրդների հանդէպ գաւթողական քաղաքականութիւն վարելու համար Լիգայի անդամ պետութիւններին ոչ մէկի կողմից Ատրպէյճանական պետութիւնը ճանաչուած չի եղել: Լիգան ազդարարած էր եղել նաեւ, որ Ատրպէյճանը իրաւունք չունի գաւթելու Ղարաբաղը:

1920 թ. Նոյեմբեր 29ին կարմիր բանակը մարել էր հայոց դաւաճոր իղձով ստեղծուած առաջին հանրապետութեան լոյսը, Հայաստանը յայտարարուել էր Խորհրդային Հանրապետութիւն: Ղարաբաղի ժողովուրդը ազդարարել էր որ իրենց երկիրը Հայաստանի անբաժան մասն է կազմում: Պաքուի քաղաքային խորհուրդի 1920 թուականի Նոյեմբեր 30ի նիստում Նարիման Նարիմանովը պաշտօնապէս յայտարարել էր, որ Նախիջևանը, Ջանգեղուրը ու Ղարաբաղը անբաժան մասն են կազմում Հայաստանի Խորհրդային Հանրապետութեան: Յեղկոմի նախագահ Նարիմանովը ու արտաքին գործերի ժողովոմ Հուսէյնովը նոյն օրը այդ որոշումը հեռագրել էին Երեւանի կառավարութեան ղեկավարին, այն տպագրուել էր նաեւ Պաքուի «Կոմունիստ» լրագրի 1920 թուականի Դեկտեմբեր 2ի թիւով:

Պոլշեիկեան կուսակցութեան Կովկասեան Բիւրոյի 1921 թուականի Յուլիսի չորսի նիստի մասնակիցների մեծամասնութեան քուէարկութեամբ որոշում էր կայացուել Ղարաբաղը համարել Խորհրդային Հայաստանի անբաժան մաս: Ստալինը, նոյն թուականի Յուլիս 5ին, Հիւսիսային Կովկասից շտապել էր Թիֆլիս, պահանջել դարձեալ բիւրոյի նիստ հրաւիրել եւ միանձնեայ որոշում կայացրել Ղարաբաղը ընդգրկելու Ատրպէյճանի կազմում, յայտարարելով որ քուէարկութեամբ սահմաններ չեն որոշում:

Սովետական իշխանութեան սահմանադրութեան թելադրած օրէնքներով «Ղարաբաղի Ազգային ժողովը» որպէս ինքնուրոյն քաղաքական միաւոր ստեղծուել էր Ատրպէյճանական Հանրապետութեան հետ միաժամանակ եւ նոյնիսկ աւելի վաղ: 1991 թուականի վերջին այն անկախութիւն հռչակել էր հրաժարուելով Խորհրդային Ատրպէյճանի իրաւանջորդութիւնից, միաժամանակ յայտարարելով 1918 թուականի մուսաւթական հանրապետութեան

վերականգնումը, որի կազմում Ղարաբաղը երբեք չէր եղել: Հայաստանի նախագահը Եւրոպական ամբիոններից յայտարարել է, որ Հայաստանը ճանաչում է Ատրպէյճանի տարած քային ամբողջականութիւնը եւ որ Ղարաբաղը դաշտային ու լեւնային մասերով երբեք չէր եղել նրա կազմում: Եւ հիմա տարած քային ամբողջականութիւն են քարոզում, թող քարոզեն, Հայաստանը վերականգնել է իրենը, թէկուզ դեռ մասամբ: Այս եւ պատմութեան մատենաներն են ճշմարտութիւնը, որոնցից վախենում է Եւրոպան, որոնցից վախենում է ԱՄՆ-ը, իր իսկ պետութեան հիմնադիր հայրերից Թամըս ձեֆրընի պատգամը ուրանալով՝ «Չենք վախնար ճշմարտութեանը հետեւելու, ուր որ ալ առաջնորդէ, ոչ ալ սխալ արտօնելու, մինչեւ այն ատեն որ բանականութիւնը անոր դէմ պայքարելու ազատ է»: Եւ այդ մի ձոն Մարշալ էվլինս, դեսպան Հայաստանի Հանրապետութիւնում, չվախեցաւ ասելու ճշմարտութիւնը, որ մի ցեղ են սպաննել ու ինքն այն կոչել իր անունով՝ Յեղապանութիւն: Այս երկրի դեռ ինչքան իմաստուն այրեր խօսում են ճշմարտութիւնը, հիմա իրենց օրէնսդիր պայտներում օրինազիծ են ներկայացրել աշխարհին յայտարարելու որ Օսմանեան պետութիւնը իր երկրում արիական մի ցեղ է սպաննել: «Արտաքին Գործերի Բաժանմունք» իրենց պաշտօնեայ Պրազան ուսուական լրագրին տուած հարցազրոյցում ասել էր՝ ազգերի ինքնորոշումը կարող է տանել անկախութեան կամ ինքնավարութեան եւ չկայ միջազգային իրաւագիտութիւն որ գերադասէր տարած քային ամբողջականութեան սկզբունքը ազգերի ինքնորոշման իրաւունքից:

Այն օրից երբ բռնակալի բանաւոր խօսքով հայոց Արցախ գաւառը բռնակցուեց թաթարներին, հայը միշտ յանդգնել էր ընդվզելու: 1948 թուականին Գրիգոր Յարութիւնեանը գրաւոր դիմել էր բռնակալին Արցախի վերամիաւորման համար: Երուսանդ Քոչինեանը 1967ին յուշագրով դիմել էր կեդրոնական իշխանութիւններին Արցախը ընդգրկելու Հայաստանի կազմում: Զաւաւեալ Բրեժնեւը յանձնարարել էր այն քննարկման ներկայացնել կուսակցութեան «Քաղաքական Բիւրոյում», սակայն պահպանողական, յետադիմական հրէածին Սոււրովը արգելք էր հանդիսացել եւ կասեցրել այն: Արդեօք այդ ժամանակ Արցախի հարցը իր արդարացի լուծմանը կը հանգէր, կարող է:

Հայաստանաբնակ մտաւորական Ալաբերթ Մուշեղեանը 1987 թուականին դիմումագիր էր ներկայացրել Գորբաչովին, Արցախը դարձեալ միաւորելու իր մայր երկրին: Նրա մակագրութեամբ այն ուղարկուել էր գիտութեան կաճառի պատմութեան բաժանմունքի գիտնական-պատմաբան Սախարովին: Նրա եզրակացութիւնը Գորբաչովի յանձնարարութեամբ ուղարկուել էր Մուշեղեանին, որ ըստ յոյն պատմաբան Ստրաբոնի Արցախը դեռեւս մինչեւ իսկ նախորդ ու առաջին դարերից բնակեցուած էր եղել հայերէն խօսող հայերով: Հայաստան կատարած իր ճանապարհորդութեան յուշագրութիւնում Ստրաբոնն է իր երկերից մէկում վկայել այդ:

Նոր Ռուսաստանի Դոման մի բանաձեւ է ընդունել, որ յետագային որոշումներ կ'ընդունի չեղեալ համարելու Խորհրդային Միութեան այն պայմանագրերը, որոնք այժմ հակադիր են իրենց ազգային շահերին: Իսկ հրեայ պոլշեիկների 1921

թ. Մարտի 16ին կնքած Մոսկուայի պայմանագիրը բխում էր արդեօք Ռուսաստանի շահերից, հապա Պրեսթ Լիթովսկի ստորագրուելի դաշնագիրը:

Եւրոմիութիւնը, Միւսաքի իմբակ անունով միջնորդ յանձնաժողով է ստեղծել, գալիս գնում են, նախագահների հետ բանակցում, առաջարկներ քննարկում, տարածքային ամբողջականութիւն քարոզում, ազատագրուած հայկական տարածքներ յանձնել թելադրում: Ժամանակն է, որ Հայաստանը այժմ բանակցի ոչ թէ Պաքուի, այլ որպէս Խորհրդային Միութեան իրաւայաջորդ՝ Մոսկուայի հետ, որի հարաւային Կովկաս եկած 11րդ կարմիր բանակն էր գրաւել Արցախը:

Հայ գորպպետ՝ առապելիական Մաղաթովը, ուսական ու հայկական կամաւորական զնդերի հետ Պարսկաստանից գրաւել էր Արցախը իր յարակից գաւառներով: 1813 թուականի Գիւլիստանի, այնուհետեւ 1828 թուականի Թուրքմենչայի պայմանագրով ամբողջ հարաւային Կովկասը միացել էր Ռուսաստանի կայսրութեանը: Կարմիր բանակն էր 1920 թուականին գրաւելի Ղարաբաղը եւ այն բռնակցել Ատրպէյճանին: Ռուսաստանում հակալեղափոխական յեղաշրջում իրականցնող հրեայ պոլշեիկների կնքած պայմանագրով Հայաստանի առաջին հանրապետութեան մաս կազմած Կարս, Արտահան, Սուրմալու գաւառները ու Նախիջևանը յանձնուել էին հրեայ Քեմալ Աթաթուրքի պետութեանը ու հրեայ Նարիմանովի Ատրպէյճանին: Պահանջել Նոր Ռուսաստանից չեղեալ համարելու Կովկասեան Բիւրոյում Ստալինի առաջարկը՝ Արցախը Ատրպէյճանի կազմում ընդգրկելը եւ Մարտի 16ի Մոսկուայի պայմանագրի Հայաստանին վերաբերող մասը, որին չէին արտօնել մասնակցելու հայկական պատուիրակութեանը: Իսկ Կարսի պայմանագիրը պարտադրանք էր եղել: Արեւելեան կողմն հայոց աշխարհի լեւներում տիեզերական կենսուժ է պայթել, ոչ քարիւղը, ոչ երկաթը, ոչ հուրը չեն կարող մարել նրանից ժայթքած ոգին...:

Իններորդ-տասներորդ դարերին Ատրպատական ներխուժած Սելճուքների Օղուկ-թուրքմենական ցեղախմբի հօտարածները իրենց ոչխարների ձեռնային արօտավայր էին դարձրած եղել մերձկասպեան շրջանները: Հաստատուել էին այնտեղ եւ ձուլել տեղի Քրիստոնեայ Աղուանակն կոչուած պետութեան ցեղերին: Թուրքավարի զագրեյիութեամբ հիմա իրենց «Աղուան» ներքին ժառանգորդ են յորջորջում: Աղուան անունով ժողովուրդը չի եղել, այն ոչ թէ ցեղի անուն է այլ տեղանքի: Այն եղել է քսանուեց ցեղերից կազմուած պետական միաւոր, որոնց յետնորդներից դեռեւս այժմ գոյատեւում են այնտեղ: Եթէ ձուլել էին նրանց, արդեօք դադարել էին Օղուկ ցեղին պատկանելուց եւ ինչու են հիմա թուրք ու բնակութեան տեղանունով իրենց ատրպէյճանից կոչում: Հայ պատմաբաններ, քաղաքագէտներ, օտար մամուլում, միջազգային տարողութեամբ արժանի հակահարուած չեն տուել ու չեն տալիս նրանց, հայկական մամուլի հրապարակումները ընթերցում են առաւելաբար հայ տարեցները: Աղուանական պետութեան ժողովուրդներին ձուլելը, հրեայ Լէմկինի խմբագրութեամբ 1948ին Մական ընդունուած «Յեղապանութեան Պայմանագրութեան» համա-

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ ARMENIAN GENERAL BENEVOLENT UNION

Բեղմնաւոր Անցեալ
Proud Past



Լուսաշող Ապագայ
Exciting Future

**"HAYORTATS"
PERFORMANCE SCHEDULE**

THURSDAY, NOVEMBER 8, 2007
AGBU MANDOGGIAN-DEMIRDJIAN SCHOOL
6844 OAKDALE AVENUE, CANOGA PARK
STUDENT PERFORMANCE
4:00 PM, \$12.00

FRIDAY, NOVEMBER 9, 2007
AGBU MANDOGGIAN-DEMIRDJIAN SCHOOL
6844 OAKDALE AVENUE, CANOGA PARK
8:00 PM, \$30.00

SATURDAY, NOVEMBER 10, 2007
AGBU ALEX MANDOGGIAN CENTER
2495 E. MOUNTAIN STREET, PASADENA
8:00 PM, \$30.00

SUNDAY, NOVEMBER 11, 2007
AGBU ALEX MANDOGGIAN CENTER
2495 E. MOUNTAIN STREET, PASADENA
GALA PERFORMANCE
5:00 PM, \$100.00

THURSDAY, NOVEMBER 15, 2007
AGBU ALEX MANDOGGIAN CENTER
2495 E. MOUNTAIN STREET, PASADENA
STUDENT PERFORMANCE
4:00 PM, \$12.00

FRIDAY, NOVEMBER 16, 2007
WESTERN DIOCESE ARMENIAN CHURCH
3325 N. GLENOAKS BLVD., BURBANK
8:00 PM, \$30.00

SATURDAY, NOVEMBER 17, 2007
AGBU ALEX MANDOGGIAN CENTER
2495 E. MOUNTAIN STREET, PASADENA
8:00 PM, \$30.00

SUNDAY, NOVEMBER 18, 2007
AGBU ALEX MANDOGGIAN CENTER
2495 E. MOUNTAIN STREET, PASADENA
5:00 PM, \$30.00

FOR INFORMATION & TICKETS
CONTACT THE AGBU OFFICES
626.794.7942


AGBU MANDOGGIAN-DEMIRDJIAN SCHOOL
818.883.2428



The Western Diocese of the Armenian Church of North America
The Armenian General Benevolent Union
Present



The Second
North American tour
of the award-winning
performing arts troupe of
the Nork Children's Center,
the "HAYORTATS".



One-of-a kind tour de force, coined as the
"Armenian Cirque Du Soleil"
Unparalleled talent, spirit and vitality,
the troupe of over 60 young and dynamic
performers will delight and entertain with a
mix of traditional Armenian and contemporary
art forms; song, dance, instrumental music,
dramatic recitation as well as skillful and thrilling gymnastics and aerobatics



AGBU San Diego Chapter
Presents

Let's Sing & Dance
in San Diego

a special party for children featuring

Taline
& Friends

SUNDAY, NOVEMBER 4, 2007 - 1:00PM

St. John Garabed Armenian Church Hall
4473 30th Street, San Diego, CA 92116

Tickets: Children \$20 / Adults \$25
Lunch Included

For tickets please call Ani Lanuza 619-889-1459
or visit www.Talinemusic.com

Armenian General Benevolent Union
Glendale - Pasadena Chapter
Presents

the illusionist

JOHN GABRIEL

magic redefined

OCTOBER 19 & 20 - 8:00 PM

OCTOBER 21 - 5:00 PM

TICKETS \$20

AGBU ALEX MANDOGGIAN CENTER
2495 E. MOUNTAIN ST., PASADENA, CA 91104

For tickets and more information, please call: 626.794.7942

ՈԱՇԻԴ ԲԵՇԲՈՒԴՈՎ

Ժամանակ առ ժամանակ պետք է շնորհակալ լինեմ ՊՈՐ. Մանաշէ-Ամիրից, որ առիթ է ընծայում ինձ, մի ծախս փրցնեմ իր հաղորդումների ծաղկանոցից, եւ գրի առնեմ, ինչպէս այսօր:

ԱՐԱ ՍԱՐԳԻՍԵԱՆ (ՊԱՐԿԵՐԷՆԻՑ ԹԱՐԳՄԱՆԵՑ ՆՈՒԱՐԴ ԶԱՐԳԱՐԵԱՆ)

Հէջ ատրպէյճանցի հուշակա-
ւոր ու յարգելի երգիչ՝ հոգիդ լոյս
ու գուարթ, երկու անգամ ներկայ
եմ եղել Թեհրանի Թագարէ Ֆար-
հանգում (մշակութային սրահում)
երբեք չեմ մոռանայ, իսկապէս
լաւերը անմահ են, յատկապէս
նրանք, որոնց վերից տրուած է
աստուածային սքանչելի ձայն, հա-
մակրելի երեւոյթ եւ բարեհամբոյր
վարք ու բարք, սիրելի Ռաշիդը
մէկն էր նրանցից: Երբ լսեցի իր
խրայատուկ ձայնը՝ վերջիչեցի Թա-
լատէ Ֆարհանգի խանդավառ ու
սրտաբուխ ծափահարութիւնը:

Այս երաժշտաթաւ քաղաքա-
կան գրուածքի պատճառը այն է որ
ամէն օր վաղ առաւօտեան նախա-
ճաշի պահին սովորաբար օտարում
եմ ռադիօ-խորալի հաղորդում-
ներից որը շատ ընդգրկուն է եւ
հետաքրքիր: Մի քանի օր է օրուայ
լուրերի առանցքում պրն. Լիբեր-
մանի անունն է պտտում: Լիբեր-
մանը նախկին խորհրդային պե-
տութեան հրեայ քաղաքացի էր,
որը տարիներ առաջ գաղթել է
Իսրայէլ եւ հիմա ունի բարձր
պաշտօն եւ ազդեցիկ եւ օգտակար
մէկն է պրն. Ահուդ Օլմերթի
պետութեան մէջ, պաշտօնական այցի
էր գնացել Ատրպէյճան, վատահոգ
առանց թարգմանչի կարիք գրա-
լու, բանակցել է ռուսերէնով Պաք-
ուի ղեկավարների հետ ամէն ուղ-
ղութեամբ, բայց վերադարձից յե-
տոյ օտարերկրեայ լրագրողների
հարցազրոյցում միայն իրանի եւ
Դամասկոս (Սուրիայի) մասին, որ-
պէս հրգպալլահի հովանաւորներ է
խօսել եւ պրն. Ահուդ Օլմերթին
տեղեկացրել է այդ համագործակ-
ցութեան մեծ վտանգը Իսրայէլի
դիմաց: Նաեւ հաղորդուեց պրն.
Ահմադի Նեժադի Պաքու մեկնելը
20 Օգոստոսին: Նման լուրեր հար-
ցեր են առաջացնում: Ամէն օր
լսելով ռադիօ-խորալի պարսկե-
րէն հաղորդումները, մտածում եմ
արդեօք այս երեք օրեայ բանակ-
ցութեան ընթացքին բացի վերե-
ւում նշուածից ուրիշ խօսակցու-
թիւններ չեն եղել: Օրինակ Արցա-

խի խնդիրը, Հայաստանի եւ Ատր-
պէյճանի հակասութիւնները վաղ
թէ ուշ բարդութիւն չե՞ն ստեղծի:
Հիմա Թուրքիան նախագահական
ընտրութեան ընթացքի մէջ է,
յատկապէս կրօնական նախագահի
ընտրուելը «Արդարութիւն եւ Առա-
ջադիմութիւն» կուսակցութեան
կողմից, երկրի բանակի ղեկավար-
ների համար իրիստ մտահոգիչ է:
Վարչապետ պրն. Էրտողանի հրա-
մանագրով այսուհետ ոչ ոք իրա-
ւունք չունի 1915 թուի վերաբեր-
եալ՝ ցեղասպանութիւն բառը երկ-
րի որեւէ լրագրում օգտագործել,
պէտք է աւելի մեղմ եւ նրբօրէն
արծարծուի որպէս ներքին դէպքեր
եւ դիպուածներ: Լսելով այս լուրե-
րը եւ մանաւանդ նկատելով որոշ
ռադիօ-թելեւիզիոնների անպատ-
շաճ լուրերը մարդու զգացնել է
տալիս թէ ծրարութեամբ է ինչոր
կրկնել անցեալը ինչ խօսք գոցել եւ
հարիւր տարի առաջուց քաղա-
քականութիւնը: Կամ որեւէ ուրիշ
տարբերակ է ձեւակերպում: Իմ
կարծիքով նախագծում է մի նոր
կայսրութիւն՝ Թուրքիայից մինչեւ
Միջին-Ասիա, Թուրան անունով եւ
Փան-Թուրքիզմ իտէալներով:

Երբ այս չգրուած եւ չարտա-
յայտուած լուրերը սովորական հա-
ղորդումների մէջ զգացում է,
ակամայից վարագոյրի ետեւ թաքն-
ուած քաղաքական ինտրիգները
երեւան են գալիս:

Ինչո՞ւ ոչ մի ակնարկ չեղաւ
ուրիշ բանակցութիւնների մասին
որ վստահաբար տեղի է ունեցել:
Օրինակ տնտեսական խնդիրներ,
Պաքուի եւ Կասպից Մովի նաֆթի
թնճուկը, նաֆթը ի՞նչ միջոցով
պէտք է Թուրքիա փոխադրել եւ
դրանից յետոյ ո՞րտեղ: Հայաստա-
նի եւ Ատրպէյճանի հակադրումը
կամ արդեօ՞ք Արցախի բանակցու-
թեան ազդեցիկ միջնորդում եղե՞լ
է: Կամ մի գուցէ դրանք ոչ մէկը
կարեւոր չե՞ն, թէ՞ անյարիր է
ամէն ինչ ամէնքը իմանան: Այս ու
նման մտքերի մէջ էի եւ թղթի
վրայ նշումներ էի անում որ ինձ
համար վերլուծումներ ան էի ու մի
գուցէ մի եզրակացութեան յանգէի,
որ պրն. Մանաշէն ունկնդիրներին
հրաւիրեց մասնակցել ռադիօ-խո-
րալի կլոր սեղանին իրենց կարծի-

քը արտայայտելու հարցազրոյցով:
Հարցադրումը հետեւեալն էր:
Արդեօ՞ք ձեր կարծիքով Ամե-
րիկայի նախագահ՝ պրն. Պուշը,
Իրանի Սեփահէ Փաղարանը (յեղա-
փոխական բանակ) թերորիստների
խմբակցութիւն է համարում թէ՞ ոչ:
Մասնակիցները կարծիք յայտնեցին
(ի հարկէ արդիւնքը պարզ էր):

Ես էլ այն մտքին էի որ
գրուածքիս ինչ վերնագիր ընտ-
րեմ, որ սիրելի Ամիրը օգնութեան
հասաւ եւ յայտարարեց որ հիմա մի
գեղեցիկ ժողովրդական (տեղական,
local, մահալի) երաժշտութիւն կը
լսէք: Ես էլ ուրախացայ կարծելով
հանրածանօթ իսրայէլական երաժշ-
տութիւն «հաւանար գիլա»ն կը
լսեմ որը տարիներ իրանում լսել եւ
ձայնակցել եմ եւ Օ գարմանք,
Ռաշիդ Բեհբուզովի գեղեցիկ ու
հնչեղ վաղուց մոռացած, ատրպէյ-
ճանցի յայտնի եւ հուշակաւոր երգ-
չի սքանչելի ձայնը լսուեց, վաղ
անցած, մոռացուած յուշերը արթ-
նացան՝ Թագարէ-Ֆարհանգում
նստած լսում եմ Անա (Մայրիկ),
Լալալար (Կակաչներ), Կոյ Գիւլում
գալսին այ նանա (թող ծաղիկս
գայ...) եւ էլ ուրիշ հիասքանչ
երգեր, ամէն ինչ մոռացայ՝ Մանա-
շէի բազմակողմանի վերլուծում-
ներն, Լիբերմանի մեկնումը Ատր-
պէյճան, Թուրքիայի ընտրութիւն-
ները, Ահմադի Նեժադի ճամբոր-
դութիւնը Պաքու, Իրանի եւ Սուր-

իայի ու հրգպալլահի զօրացումը,
ինչ ասեմ մինչեւ անգամ («քաղա-
քականութիւնը ինչպէս պէտք է
բացայայտել»): Հիացած ունկնդ-
րում էի մենակութեան մէջ, ակա-
մայից ծափահարեցի եւ բարձրա-
ձայն ասացի ողջոյն քեզ, երբ
հնչում է քո երգը, դու անմահ ես:

Քինախնդրութիւն, թշնամու-
թիւն, անազնութիւն վերանում են
երբ դու եւ քեզ նմանները խաղա-
ղութեան եւ համերաշխութեան աւե-
տաբեր էք եւ մարդկութիւնը
սրտանց է գնահատում ձեզ եւ ձեր
երգը: Ես էլ սիրելի Ռաշիդ տարի-
ներ օտարութեան մենակութեան
մէջ, ծափահարում եմ քեզ: Ծնոր-
հակալ եմ որ այս վաղ առաւօտը
պայծառացրի ինձ համար: Բայց
Ռաշիդ ջան հետաքրքրութիւնս
ինձ հանգիստ չի տալիս, արի
միասին խորհենք, Մանաշէն ինչո՞ւ
ասաց մի տեղացի երգիչ, մի թէ՞
հնարաւոր չէր եթէ ասեր մի գեղե-
ցիկ երգ ատրպէյճանցի Ռաշիդ
Բեհբուզովից, որ այս մուզիքայ
քաղաքական վերլուծումս էլ
չգրուէր: Մեծ թուրան ստեղծուե-
լու դէպքում Պաքուն էլ կը դառ-
նա՞յ նրա մի մասնիկը եւ ուշիդ-
ները կը լինեն տեղացի երգիչներ
ոչ թէ ուրոյն ատրպէյճանցի: Արդ-
եօ՞ք շատ չխորացայ մտքերի մէջ:
Ինչեւէ շնորհակալ եմ սիրելի Ռա-
շիդ որ քո աշխարհաճանաչ անունդ
գրուածքիս վերնագիրը դարձաւ:



Blue Cross of California takes the worry out of health care.

Our goal is to make staying healthy easier with a variety of affordable plans to fit your needs. For over 65 years, Blue Cross has been a leader in California offering quality health care coverage with over 41,000 doctors and 400 hospitals in our network. We offer:

- Prescription Drug Coverage
- Individual and Family Plans
- Plans for Small Businesses
- Dental Coverage
- Medicare Supplement Plans
- Life Insurance by BC Life & Health Insurance Company
- HSA-Compatible Plans by BC Life & Health Insurance Company
- Integrated Workers' Compensation by Employers Compensation Insurance Company

Call now and let me help take the worry out of your health care!

HARUT DER-TAVITIAN
Authorized Independent Agent
1807 W GLENOAKS BLVD. #202
GLENDAL, CA 91201
(818) 502-3233
HARUT@EXCELHYE.COM
WWW.EXCELHYE.COM
CA Insurance
License #0B28270

Blue Cross of California (BCC) and BC Life & Health Insurance Company (BCL&H) are Independent Licensees of the Blue Cross Association (BCA). The Power of Blue and the Blue Cross name and symbol are registered service marks of the BCA. ©2005 BCC. CAN119

GENERAL CONTRACTOR BID REQUEST

Qualified "B" licensed General Building Contractors are invited to submit a sealed bid on Project E07-19, Module 10.1 to the Burbank-Glendale-Pasadena Airport Authority by 2:05 PM, November 15, 2007. The project generally consists of the installation of new doors, new windows, air conditioning, insulation and correction of some code deficiencies for: twenty (13) single family residences, two (2) multi-family duplex dwelling (consisting of two units), three multi-family triplex dwelling (consisting of three units) and one multi-family six unit complex (consisting of six units) for a total of thirty (32) units. Bidders may obtain construction documents from the Bob Hope Airport Web Site at bobhopeairport.com under Business Opportunities and are encouraged to do so prior to the mandatory pre-bid conference. All Bidders shall register with the Airport Engineering Department either via web site or in person. Bids submitted by firms who have not registered with Airport Engineering will be considered non-responsive. Two Pre-bid conferences have been scheduled for October 25, 2007 and November 1, 2007, at 10:00 A.M. at the Bob Hope Airport Engineering Offices, 2800 N. Clybourn Ave., Burbank, California. Attendance at one or the other conference is Mandatory.

ՄԵԾԱՐԱՆՔԻ ՓԱՌԱՏՈՆ

ՆԻԻՐԻԱԾ ԻՐԱՆԱԶԱՅ ՄԵԾԱՆՈՒՆ ԵՐԳԻՉ

ԱՆԴՐԷ ՎԱԼԵԱՆԻ

ՇՆՆԴԵԱՆ 60-ԱՄԵԱԿԻՆ ԵՒ ԱՐԻԵՍՏԻ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԵԱՆ 45-ԱՄԵԱԿԻՆ

CELEBRATION NIGHT


DEDICATED TO THE
FAMOUS IRANIAN ARMENIAN SINGER

ANDRE VALIAN

ON HIS 60-th BIRTHDAY AND
45th ANNIVERSARY OF HIS
ARTISTIC LIFE

Կիրակի, Հոկտ. 28, 2007, Երեկ. ժամը 7-ին,
SUNDAY, OCTOBER 28, 2007, @ 7:00p.m.
Glendale High School-ի շքեղ սրահի մեջ
1440 E. Broadway, Glendale


Բացառիկ ելույթներով իրենց մասնակցությունն են բերելու
զաղույթիս նշանաւոր երգիչները



ANDY




ADISS



ASHOT



JOSEPH




HAROUT



SAKO



ALEN



HEROS

Նւագախմբի ղեկավար, երաժիշտ՝
ՀԵՐՈՍ ՄԻՆԱՍԵԱՆ



Տոմսերի արժեքը՝
\$50, \$40, \$30, \$20

- CHATERIAN VIDEO 818-242-6928
- PACIFIC VIDEO 818-956-6643
- GLENOAKS VIDEO 818-242-9009
- ANI GROCERY 818-241-7229

Զրի առաքման համար զանգել
For Free Delivery Call **818.265.0506**

ԼՈՒԿԵԱՑՆԵՐՈՒ ԵՒ ՇԱՏԱԽՕՍՆԵՐՈՒ ԴԱԲԱՃԱՆՈՒԹԻՒՆԸ

ՎԱՐԴԱՆ Ա.Ի. ՔՆՆՅ. ՏԻԻԼԿԵՐԵԱՆ

Ամէն ժամանակի մարդիկ՝ ըսեր են եւ այսօր ալ՝ յաճախաբէս կը կրկնեն, թէ ԼՈՒՈՒԹԻՒՆԸ ՈՍԿԻ է: Հազարամեակներու կշիռ ունեցող այս իմաստութիւնը՝ անժխտելի է: Որովհետեւ, պարագաներ կան, ուր լուսթիւնը հոգեկան ուժ է, առաքինութիւն կը բուրդ է եւ կը դիւցազնացնէ յանուն ճշմարտութեան պայքարողը:

Բայց պարագաներ ալ կան, ուր լուսթիւնը ժանգոտած թիթեղի չափ փայլ չունի: Երբ վախկոտ ու վարանոտ մարդիկ՝ աղաղակող ճշմարտութիւններու դիմաց կը մնան սառնակոյտի պէս քարացած:

Այս լուսկեաց մարդոց վարքը՝ կ'որակենք երկչոտութիւն, եւ ատկէ վեր, քաջութեան պակաս եւ դաւաճանութիւն:

Մտածող ու մտացի մարդիկ՝ լաւ գիտեն, թէ շիկացած բանավէճերու ընթացքին, երբ պէտք է խօսին ու երբ պէտք է լռեն:

Ներկայ փոթորկոտ ժամանակներուն, յատկապէս Լոս Անճելըսի հայահոտ համայնքներու մէջ, ամէն ասպարէզի ու դասակարգի մարդիկ, ամպիտն մը գտած՝ լիաթոք չազեցում կուտան իրենց խօսքի ու գաղափարի քաղցին:

Մարդն ալ շփոթութեան կը մատնուի ու չի կրնար գատորոշել, թէ բազմութիւններում ո՞վ է արուեստագէտը եւ ո՞վ՝ արուեստասէրը, ո՞վ է գրագէտը եւ ո՞վ՝ գրականագէտը, ո՞վ է դերասանը եւ ո՞վ՝ դերակատարը, ո՞վ է ծաղրանկարիչը եւ ո՞վ՝ գծագրիչը, ո՞վ է արժանաւորը եւ ո՞վ՝ անարժանը,

ո՞վ է տաղանդաւորը եւ ո՞վ՝ շնորհագուրկը, ո՞վ է բարեպաշտը եւ ո՞վ՝ անբարիշտը:

Երբ պատիւը կը մրոտեն ու չես խօսիր, երբ կը զրպարտեն ու չես ընդվզիր, երբ կ'անպատուեն ու չես որոտար, երբ կ'անիրաւեն ու չես պոռթկար, երբ հաւատքը կը հեզնեն ու չես բարբառիր, երբ ճշմարտութիւնը կը խեղաթիւրեն ու չես ընդդիմադրեր, չեմ գիտեր ի՞նչ պէտք է կոչել քեզ, մա՞րդ կամ անասուն:

Այս ափսոսալի պարագաներուն ցուցաբերած լուսթիւնդ, որուն կ'ապաւինիս բոլորանուէր փարումով, վատագոյն առումով՝ ԴԱԻԱՃԱՆՈՒԹԻՒՆ է:

Դարուս հայ շատախօսները, աշխարհական եւ հոգեւորական իրենց տրամադրութեան տակ ունին խօսքին բոլոր ամպիտները, իրենց գաղափարախօսութիւնները հրապարակելու, բայց չունին իմաստութիւնը հակակռեւր իրենց շատախօսութիւնը:

Մնապարծութեամբ կը խօսին, առաւելապէս բոլոր անոնք, որ ըսելիք ու ընելիք չունին, քան անոնք, որ հանրանուէր պատուակալ պաշտօններու վրայ, բարոյական ու նիւթական ուժ կը սպառեն:

Իսկութեան մէջ, ո՛չ շահակրատելը խօսիլ է եւ ո՛չ ալ լռելը՝ լուսթիւն, երկու պարագաներուն ալ, հայը՝ հայութեան մէջ անպէտ ներկայութիւն մըն է:

* * *

Ապագայանացած եւ ազահութեան մէջ ախոյեանացած հայեր կան, գեհնի անառականոցէն

վկայուած, որոնք կարող են փառաքաղական խայծերով իրենց խորշերէն դուրս հանել, ոչ միայն օձերը, այլ մինչեւ անգամ դուրս բերել իրենց որջերէն... ԻժԵՐԸ:

Անոնք հայ լեզուին բոլոր ստորին մակդիրները կը ցուցադրեն իրենց կերպարին վրայ, այնքան հարազատօրէն, որ քան սատանան իր շարութեան բնածին յատկանիշները:

Այս անուղղալ շահատակները, շատախօսութիւնը իտէալ ըրած են իրենց սնափառութեան եւ համանոյն նկարագրով՝ ուրիշներ եւս? Իրենց կապարացած լուսթեամբ, պատճառ կ'ըլլան որ անմեղութիւններ դատապարտուին ու խաչուին:

Թէ շատախօսը եւ թէ՛ լուսկեացը, հոն՝ ուր պէտք է լռեն, կը շատախօսեն եւ հոն ուր պէտք է խօսին՝ կը լռեն:

Շատախօսութիւնը եւ լուսթիւնը սատանային փառաքաղական գէնքերն են, հակասութիւններով յատկանշուած:

Հայ ժողովուրդը իր գոյութեան բոլոր դարաշրջաններուն՝ ծանրակշիռ կորուստներ ունեցեր է ճշմարտութեան դէմ պայքարող լուսկեացներու եւ շատախօսներու հակասութիւններէն: Այսօր ալ՝ անոնց նողկալի ունակութիւնները, համանոյն որակով կը գործեն ու կը մտրակեն հայ ժողովուրդին տարաբախտ ճակատագիրը:

Ճշմարտութեան այս կատաղի հալածիչները? ամէն տեղ են, ուր որ հայ աշխարհէն դուրս ափ մը հայութիւն կայ տոհմաշէն կառուցներով:

Հոն ուր անմեղութիւնը պէտք է պաշտպանուի ճշմարտութեան վերջին տառով, դաւաճանական

լուսթիւն կը պահուի եւ հոն, ուր սատանային պերճախօս բարբառը պէտք է խափանուի, շատախօսութիւնը իր փխրուն փաստարկութիւններով՝ աւեր կը գործէ:

Ափսոսալի է, որ քրիստոնեայ աշխարհին մէջ ճշմարտութիւնը եւ արդարութիւնը խոչտանգուամբերու կ'ենթարկուին քրիստոնեայ սուտ քարոզիչներու շահատակութիւններէն:

* * *

Որքան բարիք եւ օգուտ պիտի քաղէր հայրենի ժողովուրդը իր քաղաքական ու նուիրապետական իշխանութիւններէն, եթէ ճշմարտութեան լեզուն գործածէիչ չդադրէին:

Հայ նահատակ ժողովուրդը՝ հազարամեակներու ընթացքին, առաւելապէս տուժեր ու տառապեր է ներքին եսական հակամարտութիւններէն, քան թէ իր սահմանակից բարբարոս ժողովուրդներու ներխուժումներէն:

Հանրային բեմերէն արտասանուած սնապարծ ատենախօսութիւնները, ուրիշ նպատակ չեն հետապնդեր, եթէ ոչ՝ խոչտանգել իրենց երկարաշունչ ուղերձներով ունկնդիր հասարակութիւն համբերութիւնը եւ թանկագին ժամանակը:

Նկատել եմ շատ անգամ, որ մարդիկ իրարու հետ կը խօսին ու չեն լսեր ատենախօսը, որ յանկարծ ցատկով կ'ընդհատէ խօսքը եւ շանթարձակ ակնարկներ կ'ուղղէ աղմկարարներուն:

Նոր Աշխարհ կոչուած՝ այս ազատ ու հարուստ երկիրն մէջ, գիտութիւններ եւ արուեստներ ուսանելու համար այլազան դպրոց-

Մար.ք էջ 23

Wahib's
MIDDLE EAST RESTAURANT
 الشرق مطعم
MEDITERRANEAN LEBANESE FOOD

COME IN AND ENJOY OUR PATIO AND THE FINEST SHISA "HOOKAH"

CATERING FOR ALL OCCASION

FAMILY ENTERTAINMENT BANQUET HALL EVERY FRIDAY ~ & ~ SATURDAY NIGHT INTERNATIONAL ~ ARABIC CALL FOR RESERVATION

BELLY~DANCING

MOUHAMAD SALEM & HIS BAND ~ VARTAN / NAZO & AMIR

910~E.MAIN ST, ALHAMBRA, CA.
 TEL 626-281-1006 626-587-1048
 FAX 626-281-3641

ՄԱՐՁԱԿԱՆ

ՖՈՒԹՊՈԼ

**ԵՐՐՈՊԱՅԻ ԱՌԱՋՆՈՒԹԵԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՓՈՒԼ
ՀԱՅԱՍՏԱՆ - ՍԵՐՊԻԱ 0-0**

Հայաստանի ֆուտպոլի հաւաքականը Երեւանում ոչ-ոքի՝ 0:0, խաղաց Սերբիայի ֆուտպոլի հաւաքականի հետ Եւրո-2008-ի առաջնութեան ընտրական իր հերթական խաղում: Հենց խաղասկզբից երկու թիմերն էլ, առանց երկար մտածելու, դիմեցին բաց ֆուտպոլի՝ փոխադարձ սուր գրոհներով:

Հայաստանի ֆուտպոլիստներն առնուազն 4-5 անգամ մօտ էին յաջողութեանը, իսկ խաղավարտին մօտ փոխարինման դուրս եկած Արա Յակոբեանը չկարողացաւ դառնալ գոլի հեղինակ՝ վրիպելով մօտ տարածութիւնից: Հանդիպումն այդպէս էլ աւարտեց 0:0 հաշուով, բայց սա այն խաղն էր, որի նկատմամբ հետաքրքրութիւնը դրանից չպակասեց: Հայաստանի ֆուտպոլիստները եւս մէկ անգամ ապացուցեցին, որ ի վիճակի են խաղալ լուրջ թիմերի հետ եւ այսօր նոյնիսկ ոչ-ոքին Սերբիայի ուժեղ թիմի հետ չբաւարարեց ոչ ֆուտպոլիստներին եւ մարզիչներին, եւ ոչ էլ մարզասէրներին:

Խաղից յետոյ կայացած մամուլի ասուլիսում ՀՀ հաւաքականի գլխավոր մարզիչ Թոմ Ջոնսը նշեց, որ հպարտ է իր ֆուտպոլիստներով, որոնք կարողացան արժանի խաղ ցուցադրել եւ ոչ-ոքի խաղալ ուժեղ մրցակցի հետ: «Ի հարկէ, մենք պէտք է յաղթէինք՝ ունենալով մի շարք գոլային պահեր», - ասաց նա:

Ըստ Սերբիայի թիմի գլխավոր մարզիչ Խավիէր Կլեմենտիի՝ խաղը շատ լարուած ստացուեց, եւ երկու թիմերն էլ առաջին խաղակէստում հաւասար հնարաւորութիւններ ունէին: «Մեր թիմը փորձեց հնարաւորն անել, բայց չկարողացաւ, եւ պէտք է աշխատենք սխալների վրայ: Երկրորդ խաղակէստում Հայաստանի թիմը շատ աւելի ուժեղ էր եւ իրօք պէտք է յաղթեր՝ ստեղծելով մի շարք գոլային պահեր», - նշեց նա:

»ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՒ ԱՏՐՊԵՅՅԱՆԸ ԱՅԼԵԻՍ ԶԵՆ ՀԱՆԴԻՊԻ«

ՌԻԵՅԱ-ն Յուլիսին Միշել Պլատինիի գլխավորութեամբ չեղեալ յայտարարեց Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ կայանալիք հանդիպումը՝ կողմերի շնորհելով 0-ական միաւոր: Պլատինի կարծիքով՝ այս ամէնի մեղաւորը ՌԻԵՅԱ-ի նախկին ղեկավարներն էին, որոնք չէին փորձել կանխել Հայաստանի եւ Ատրպէյճանի միեւնոյն խմբում յայտնուելը:

«2 տարի առաջ ՌԻԵՅԱ-ն սխալ էր գործել. երկու ոչ լաւ յարաբերութիւններ ունեցող երկրների հաւաքականներ յայտնուել էին միեւնոյն խմբում: Շատ հեշտ կը լինէր գործկոմով որոշում կայացնել եւ Հայաստանին ու Ատրպէյճանին տարբեր խմբերում ընդգրկել, - ասաց նա, - Երբ ես դարձայ նախագահ անհրաժեշտ էր, որ Սեպտեմբերին այդ երկրները մրցէին միմեանց հետ: Գործկոմը դիմեց տարածաշրջանի փորձագէտներին, որպէսզի մեզ ներկայացնեն իրավիճակը: Փորձագէտները գործկոմին առաջարկեցին այդ հանդիպումները չիրականացնել, որն էլ գործկոմը հաստատեց: Միաւորներ չշնորհուցին, քանի որ եթէ հանդիպումը չի եղել, ապա միաւոր եւս չի կարող լինել»:

Պլատինին վստահեցրեց, որ Հայաստանը եւ Ատրպէյճանը այլեւս իրար հետ միեւնոյն խմբում չեն յայտնուի. «Մենք գործկոմում որոշում ընդունեցինք եւ առաջարկեցինք աշխարհի առաջնութեան ընտրական փուլի կազմակերպիչներին, որ Նոյեմբերին Լոզանում կայանալիք ընտրական փուլի վիճակահանութեան ժամանակ 2 թիմերը լինեն նոյն զամբիւղում եւ չլինեն մրցակիցներ»: Այն հարցին, թէ եթէ Հայաստանը չուտով կարող է յայտնուել վարկանիշով աւելի բարձր զամբիւղում, իսկ Ատրպէյճանը ամէնացածրում՝ ՖԻՖԱ-ի նախագահ Զեյ Բլատեր պատասխանեց. «Այդ հարցը կարգաւորում է ՖԻՖԱ-ն: Մենք այնպէս կ'անենք, որ այդ թիմերը նոյն խմբում չյայտնուեն: Վստահեք ինձ, որովհետեւ ես վիճակահանութեամբ զբաղում եմ 1978 թուականից»:

ԾԱՆՐԱՍՄԱՐՏԻ ԵՐՐՈՊԱՅԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԱՌԱՋՆՈՒԹԻՆ ՍԵՏԱԼՆԵՐԻ ՀԱՐՈՒՍ ՊԱՇԱՐ

Ծանրամարտի Եւրոպայի երիտասարդական առաջնութիւնում բաւական յաջող են հանդէս եկել Հայաստանի ներկայացուցիչները: Տղաների պայքարում մեր թիմը գրաւել է 2-րդ հորիզոնականը՝ նուաճած մեդալների քանակով գիջելով միայն Բելառուսին:

Գերծանը քաշային կարգում մեծ էին սպասելիքները Ռուբէն Ալեքսանեանից, սակայն երիտասարդ ծանրորդը բաւարարուեց միայն արծաթէ մեդալով: Պոկում վարժութիւնում Ռուբէնը 171 կգ արդիւնքով 2-րդն էր, իսկ հրում վարժութիւնում արժանացաւ փոքր ոսկէ մեդալի: Այս քաշային կարգում հանդէս եկած Արտակ Մկրտչեանը գրաւեց 4-րդ հորիզոնականը:

Աղջիկների պայքարում 75 կգ քաշային Հռիփսիմէ Խուրշուդեանը, երկամարտում ցոյց տալով 257 կգ, արդիւնք դարձաւ Եվրոպայի ախոյեան: Հռիփսիմէն պոկում վարժութիւնում արժանացաւ փոքր արծաթի, իսկ հրում վարժութիւնում չունէր իրեն հաւասարը: Նուաճած մեդալների քանակով Հայաստանի կանանց հաւաքականը գրաւեց 4-րդ տեղը, իսկ լաւագոյնը Ռուսաստանի ներկայացուցիչներն էին:

«ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ»
ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍԻԼԻ ՅԱՅՏԱԳԻՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՑՈՅՑԸ
CHARTER CABLE 26-ՐԴ ԿԱՅԱՆ
ԿԼԵՏԵՅԼ - ՊԸՐՊԵԼԵ - ԼԱ ՔՐԵՍԵՆԹԱ
ՀԻՆԳՇԱԲԹԻ ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՄԸ 10:00-11:00

ԵՐՐՈՊԱԿԱՆ ՖՈՒԹՊՈԼ

ԵՐՐՈ - 2008 ԶՏՈՒՄԻ ՄՐՑՈՒՄՆԵՐ

Ա. ԽՄԲԱԿ		Հոկտեմբեր 17	
Հոկտեմբեր 13		Պելճիքա - Հայաստան	3-0
Հայաստան - Սերպիա	0-0	Ղազախստան - Փորթուկալ	1-2
Լեհաստան - Ղազախստան	3-1	Ագրպէյճան - Սերպիա	1-6
Պելճիքա - Ֆինլանտա	0-0		
Ագրպէյճան - Փորթուկալ	0-2		

Ա. Խմբակի դասաւորումը			
Լեհաստան	12 7 3 2 20-10	24	Պելճիքա 12 4 3 5 13-14 15
Փորթուկալ	12 6 5 1 23-10	23	Հայաստան 10 2 3 4 4-11 9
Սերպիա	12 5 5 2 19-9	20	Ղազախստան 11 1 4 6 9-18 7
Ֆինլանտա	12 5 5 2 11-6	20	Ագրպէյճան 9 1 2 6 4-19 5

Բ. ԽՄԲԱԿ		Հոկտեմբեր 17	
Հոկտեմբեր 13		Ֆրանսա - Լիթվանիա	2-0
Իտալիա - Վրաստան	2-0	Վրաստան - Սլովակիա	2-0
Սլովակիա - Ուքրաինա	3-1	Ուքրաինա - Ֆարո Կղզիներ	5-0
Ֆարո Կղզիներ - Ֆրանսա	0-6		

Բ. Խմբակի դասաւորումը			
Ֆրանսա	11 8 1 2 23-3	25	Լիթվանիա 9 3 1 5 7-11 10
Սլովակիա	11 8 0 3 20-10	24	Վրաստան 11 2 1 7 16-17 10
Իտալիա	10 7 2 1 17-7	23	Ֆարո Կղզիներ 11 0 0 11 3-40 0
Ուքրաինա	10 5 1 4 15-11	16	

Գ. ԽՄԲԱԿ		Հոկտեմբեր 17	
Հոկտեմբեր 13		Պոնդիա - Նորվեկիա	0-2
Հունգարիա - Մալթա	2-0	Թուրքիա - Յունաստան	0-1
Մոլտաւիա Թուրքիա	1-1	Մալթա - Մոլտաւիա	2-3
Յունաստան - Պոնդիա	3-2		

Գ. Խմբակի դասաւորումը			
Յունաստան	10 8 1 1 18-9	25	Հունգարիա 10 4 0 6 10-17 12
Նորվեկիա	10 6 2 2 22-8	20	Մոլտաւիա 11 2 3 6 9-19 9
Թուրքիա	10 5 3 2 22-10	18	Մալթա 10 1 2 7 9-22 5
Պոնդիա	11 4 1 6 16-21	13	

Դ. ԽՄԲԱԿ		Հոկտեմբեր 17	
Հոկտեմբեր 13		Իրլանտա - Կիպրոս	1-1
Կիպրոս - Կալէս	3-1	Սան Մարինո - Կալէս	1-2
Իրլանտա - Գերմանիա	0-0		
Սլովակիա - Սան Մարինո	7-0		

Դ. Խմբակի դասաւորումը			
Գերմանիա	9 7 2 0 31-4	23	Սլովակիա 10 4 1 5 27-20 13
Զեխիա	9 6 2 1 19-4	20	Կալէս 10 4 1 5 16-17 13
Իրլանտա	11 4 4 3 15-12	16	Սան Մարինո 11 0 0 11 2-52 0
Կիպրոս	10 4 2 4 17-18	14	

Ե. ԽՄԲԱԿ		Հոկտեմբեր 17	
Հոկտեմբեր 13		Ռուսաստան - Անգլիա	2-1
Անգլիա - Եսթոնիա	3-0	Մաքետոնիա - Անտորրա	3-0
Խրովաթիա - Իսրայէլ	1-0		

Ե. Խմբակի դասաւորումը			
Խրովաթիա	10 8 2 0 25-4	26	Մաքետոնիա 10 3 2 5 10-11 11
Անգլիա	11 7 2 2 22-4	23	Եսթոնիա 10 0 1 9 1-20 1
Ռուսաստան	10 6 3 1 16-5	21	Անտորրա 9 0 0 9 1-27 0
Իսրայէլ	10 5 2 3 17-11	17	

Զ. ԽՄԲԱԿ		Հոկտեմբեր 17	
Հոկտեմբեր 13		Լիխթենշթայն - Իսլանտա	3-0
Իսլանտա - Լաթվիա	2-4	Շուէտ - Հիւս. Իրլանտա	1-1
Տանիմարք - Սլովակիա	1-3	Տանիմարք - Լաթվիա	3-1
Լիխթենշթայն - Շուէտ	0-3		

Զ. Խմբակի դասաւորումը			
Շուէտ	10 7 2 1 21-5	23	Լաթվիա 10 3 0 7 10-12 9
Սլովակիա	10 7 1 2 19-8	22	Իսլանտա 11 2 2 7 10-24 8
Տանիմարք	10 5 2 3 17-9	17	Լիխթենշթայն 10 2 1 8 8-28 7
Հիւս. Իրլանտա	10 5 2 3 15-12	17	

Է. ԽՄԲԱԿ		Հոկտեմբեր 17	
Հոկտեմբեր 13		Լիքսամպուրկ - Ռումանիա	0-2
Պելճուսիա - Լիքսամպուրկ	0-1	Հոլանտա - Սլովակիա	2-0
Սլովակիա - Ալպանիա	0-0	Ալպանիա - Պուլկարիա	1-1
Ռումանիա - Հոլանտա	1-0		

Է. Խմբակի դասաւորումը			
Ռումանիա	10 8 2 0 20-5	26	Սլովակիա 10 2 2 6 8-13 8
Հոլանտա	10 7 2 1 13-3	23	Պելճուսիա 10 2 1 7 11-20 7
Պուլկարիա	10 5 4 1 15-7	19	Լիքսամպուրկ 10 1 0 9 2-22 3
Ալպանիա	10 2 5 3 9-8	11	

ՄԱՐԱԶԴ

ՌԻՏԱ ՓԻՐՁԱՆԵԱՆ

Դառը վշտով գոժում ենք մեր թանկագին հարազատի՝ ՌԻՏԱ ՓԻՐՁԱՆԵԱՆԻ ցաւալի մահը, որը պատահեց Կիրակի 14ին, երկարատե հիւանդութիւնից յետոյ:

Յուզարկաւորութիւնը եւ թաղման կարգը տեղի կ'ունենայ Երկուշաբթի, Հոկտեմբեր 22ին, 2007, կէսօրից յետոյ ժամը 2:00ին, Glendale Forest Lawn գերեզմանատան (Glendale Avenue) Church of Recessional եկեղեցում:

Եկեղեցական կարգը պիտի կատարուի Թեմիս բարեխնամ Առաջնորդ Գեր. Տ. Յովնան Արք. Տէրտէրեանի նախագահութեամբ: Սգակիրներ՝

- Ամուսինը՝ Սուրէն Փիրջանեան
- Չաւակը՝ Վահէ Փիրջանեան
- Քոյրերը՝ Ադա եւ Ռինա Մելիք-Վարդանեաններ (Վիեննա)
- Ամուսնու քոյրը՝ Վալենթինա եւ ամուսինը Պետրոս Նազարբէգեաններ
- Ամուսնու եղբոր կինը՝ Յասմիկ Փիրջանեան

ՆՈՒՐԱՏՈՒԹԻՒՆ

ԳՐԻԳՈՐ ԱՔՉԱՅԵԱՆԻ մահուան տխուր առթիւ կատարուեցան հետեւեալ նուիրատուութիւնները Կիրակեան Բարեգործական Միութեան:

- Տիար Միհրան Չոլաքեան \$200
- Տէր եւ Տիկ. Սէմ եւ Անէթ Աբէլեան \$100
- Տիար Կարապետ Պետրեան \$100
- Տիար Վահան Պետրիսեան \$100
- Տէր եւ Տիկ. Օհաննէս եւ Աստղիկ Պետրոսեան \$100
- Տիկ. Մատլէն Չուլճեան \$100
- Տիկ. Ֆիլոր էքիզեան \$100
- Տիար Կարօ Էսքիճեան \$100
- Տորին Օտապաշեան \$100
- Տիար Բիւզանդ Շոհմէլեան \$100
- Ս. Չիւրիւքեան \$50
- Տիկ. Արփինէ Պուսթանի եւ Թալին \$50
- Տիար Յովհաննէս Պոյաճեան \$50
- Տիկ. Արտեմիս Չափճեան \$50
- Տէր եւ Տիկ. Յակոբ եւ Վարսենիք Տէր Մկրտիչեան \$50
- Տէր եւ Տիկ. Աւօ եւ Թամար Չաղապալանեան \$50
- Տէր եւ Տիկ. Հապիպ եւ Նորա Ֆուսթըքճեան \$30
- Տիկ. Խաթուն Գապայեան \$25

ԱՊԱՔԻՆՈՒՄ

Հ.Մ.Մ.ի Տիկնանց Վարչութիւնը ապաքինում կը մաղթէ իր վարչական անդամուհիներէն Տիկ. Մայրանուշ Սողոմոնեանին, որ անհանգստութեան պատճառով փոխադրուած է հիւանդանոց:

Այժմ ան հանգստեան շրջանը կը բոլորէ իր տան մէջ: Կատարեալ առողջութիւն կը մաղթենք մեր սիրելի ընկերուհիին: Առ այդ \$100 կը նուիրեն «Մասիս»ին:

ԱՊԱՔԻՆՈՒՄ

Ընկ. ՎԱՀԱՆ ԳԱԶԷՉԵԱՆ եւ թարկուած է վիրաբուժական յաջող գործողութեան մը: Արագ ապաքինում կը մաղթենք յարգելի ընկերոջ: «Մասիս»

ԲԱՑՈՒԱԾ ԵՆ

Հիպնոսարուժութեան երկու կեդրոններ ղեկավարութեամբ՝ Փորձառու բժիշկ Արթին Սաղրեանի

Փասատիմայի մէջ՝ Երեւանի, Հինգշաբթի եւ Շաբաթ Հասցէ՝ 1060 N. Allen Ave. 2nd floor Unit E Pasadena CA 91104

Կլէմտէյի մէջ՝ Երկուշաբթի, Զորեկաբացի եւ Ուրբաթ Հասցէ՝ 450 North Brand Blvd. Suite 600 Glendale CA 91203

Հեռախօս (818) 434-8118 միայն ժամադրութեամբ Առաւօտեան ժամը 10-էն, կ.ե. ժամը 3

«ՏԻԼԻՉԱՆ» ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑ ՎԱՉԷ ՇԱՐԱՖԵԱՆ ԺԱՍԱՆԱԿԱԿԻՑ ԵՐԱԺԻՇՏԸ

Շարունակուած էջ 9-էն

Հարժերուն մէջ, արուեստագէտները մեկնաբանեցին կատարողական կատարեալ եռանդուն վարպետութեամբ:

Գնահատանքի ծափերու արժանացան, ներկաները գոհ մեկնեցան: Կատարեալ էր մեր վայելքը, բայց ինչո՞ւ մեր գաղութի բազմաթիւ արուեստագէտները չեն հետաքրքրուած եւ կը փայլին իրենց բացակայութեամբ: Արդեօք սրահի վաճարը խոչընդոտ է, թէեւ ես ալ կը դժկամակիմ բայց ընտիր երաժշ-

տութիւնը զիս կը համոզէ:

Համերգը կը վայելէր Հարմըն եւ Լուսինա Հապըրտ ազնուական գոյգի հովանաւորութիւնը: Գովելի մտալոյսը ունեցած են օժանդակել հայ ժամանակից երաժիշտներու գործերուն ծանօթացման: Հրաշալի ժեստ մը: Հայ ստեղծագործողը կ'ուզէ ճանչցուիլ, ունկնդիրներ ունենալ:

Համերգը կը հովանաւորեն Յովսէփ եւ Հիլտա Ֆիտանեանները, ոգեկոչելով իրենց վաղամուկ որդւոյն՝ Միլոյի մահուան երկրորդ տարեկիցի յիշատակը: Կը պատենք Միկոն յարգողներ տեսնել:

ԼՈՒԿԵԱՅՆԵՐՈՒ ԵՒ ՇԱՏԱԽՕՍՆԵՐՈՒ ԴԱԻԱՃԱՆՈՒԹԻՒՆԸ

Շարունակուած էջ 20-էն

Ներ գոյութիւն ունին, ափսոսալի է սակայն, որ չկայ ուսումնարան մը, որ շատախօս հայեր յաճախեն եւ մտիկ ընել սորվին:

Դժբախտաբար, ներկայիս աւելի շեշտ ու փայլ առած՝ շատախօսութիւնները եւ դաւաճանական լոռութիւնները կը շարունակուին եւ միամիտ հասարակութիւնը որոտալի ծափերով կը խրախուսէ անոնց սնապարծութիւնը:

Աղանդամոլ քարոզիչները՝ հեռուստատեսիլի կաշաններէն՝ Հին եւ Նոր Կտակարանները կատակերգութիւններու վերածած, առասպելախառն պատմութիւններ կը հիւսին ու այժմիտ բարեպաշտներու հոգին եւ դրամապանակը կը պարպին:

Օտարին վաճառուած այս սուտ քարոզիչները ցեղասպանութիւն կը գործեն, հայ ժողովուրդին մարմնէն եւ ուղղափառ Հաւատքէն հաւատացեալներ որսալով եւ օտարին գիրկը նետելով:

* * *

Կիրակի տօնական օր մը հրաւիրուեցայ քարոզելու՝ քոյր եկեղեցու մէջ, հո՞ծ հավատացեալներու ներկայութեան:

Հոգեւոր հովիւը՝ զիս հասարակութեան ծանօթացնելէ ետք, խօսքը ինծի ուղղեց՝ կենսութեան ժպիտով,

-Տէր Հայր, հիմա բեմը ձեզի կը յանձնեն, կրնաք ձեր ուզածին չափ խօսիլ:

-Սիրելի Տէր Հայր, պատասխանեցի, ես ոչ մէկ ժամանակ ուզածիս չափ չեմ խօսած, այլ քարոզած եմ, ժողովուրդին համբերութեան եւ տրամադրութեան համաձայն:

Շատախօսութիւնը, ո՞չ միայն կը սառեցնէ ունկնդիր աղօթողներու հոգեկան տրամադրութիւնը, այլ տաղտկալի կը դարձնէ քարո-

զին ունկնդրութիւնը:

Տարիներ առաջ, վաստակաշատ քահանայի մը հովուական ծառայութեան 25 ամեակը պիտի տօնակատարուէր յոբելիանական հանդիսութեամբ: Գլխաւոր խօսողը ես պիտի ըլլայի, որպէս հանգամանօրէն ծանօթ քահանային կեանքին ու ծառայութեան:

Բարեհոգի Տէր հայրը, այնքան շատ խօսողներ հրաւիրեք էր, ժամանակը կէս գիշերին կը մօտենար եւ յուսալքուած կը սպասէի կարգիս:

Սրահին բազմութիւնը՝ յոգնած ուղերձներու ունկնդրութեանէն՝ մաս առ մաս սկսեց ին հեռանալ սրահէն, հիասթափութիւն պատճառելով հոգիիս:

Սրահը կիսովին պարպուած էր ներկաներէն, երբ բեմ հրաւիրուեցայ ատենախօսելու, յուսալքուած ու բոլորովին անտրամադիր:

Հազիւ պիտի սկսէի լեզուս շարժել, յանկարծ կին մը բարձրադաղակ կեցուց զիս:

-Տէր Հայր, եթէ հինգ վայրկեանէն աւելի չխօսիք, կը խոստանամ Բարեգործականին 100 տոլար նուիրատուութիւն մը ընել:

Սրահին մթնոլորտը՝ այս անսպասելի բացականչութեանէն՝ քրքշալի ժխտով փոթորկեցաւ:

Ուրիշ տիկին մը, աւելի առատաձեռն, խոստացաւ 200 տոլար նուիրել նոյն Միութեան, եթէ ԲՆԱՎ ՉԽՕՄԻՄ:

Ալ՝ լեզուս կաշկանդուեր էր, տրամադրութիւնս սառեց, միտքս մթազներ: Ինծի կը մնար քանի մը բառով շորհաւորել Յոբելիարը եւ աղօթքով փակել հանդիսութիւնը:

Նօսրացած հասարակութիւնը բաժնուեցաւ սրահէն յոգնած, յուսահատ, հիասթափուած, առանց Տէր Հայրը շնորհաւորելու, որ աչքերը մեկնողներուն յարած, կ'ափսոսար հանդիսութեան անփառունակ վախճանին վրայ:

ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ

(200 ՀՈԳԻ ՇԱՍՐ)

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՇԱՍՐ

1060 N. ALLEN AVE. PASADENA

ԵՆՈԱԶԱՅՆԵԼ (626) 797-7680

ՎԱՐՁՈՒ ԽԱՆՈՒԹ

Փասատինայի մէջ փոքր խանութ մը վարձու է Washington պողոտայի վրայ: Հասցէն է՝ 1527 Washington Blvd, Pasadena:

Մանրամասնութիւններու համար հեռաձայնել Աւոյին՝ (626) 794-5318 թիւին:

**ՍՈՑԻԱԼ ԳԵՄՈՎՐԱՏ
ՀՆՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ**

**120
ԱՄԵԱԿԻ**



ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ

Կապակերպությամբ՝

Ս.Գ.Հ.Կ. Արևմտեան Ամերիկայի Վարիչ Մարմնի

Օրումն Գլխաոր Բանախօս՝

Լիւտմիլա Սարգսեան

Հայաստանի ՄԴՀԿ-ի Ատենապետ

Գեղարուեստական ձոխ Յայտագիր

Գեղարուեստական Ղեկավար՝

Խմբավար՝ Միքայէլ Աւետիսեան

Կը Մասնակցին՝

Ատիս Հարմանեան Գագիկ Պատալեան

Սամուէլ Վարդանեան

Վարդան Էլ Սիրանուշ Գէորգեան Պարայիս Համույթ

Տեղի կ'ունենայ

Կիրակի, Նոյեմբեր 4, 2007

Երեկոյեան ժամը 6:00-ին

Glendale High School-ի սրահին մէջ

1440 East Broadway, Glendale, CA 91205

Մուտքը՝ Ազատ